

ԱԹԱՆԱՍ ԱՆԷՔՍԱՆԻՐԱՑԻ

ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախա-
ձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր
կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրու-
թիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու
առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց
Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս
ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս
համացանցային հասցէն.*

gradaran@mashtoz.org

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանա-
ցանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւն-
ների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկու-
թիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել
համացանցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղազարեան

Մեր անունով

Քրիստոնեությունն առաջին դարերում հռչակալուր գրություններից մեկը լինելով, Սաղմոսների մեկնության մասին Մարչէլինոսին ուղղուած նամակը յունարէն Աստուածաշնչի հինգերորդ դարին պատկանող աղեքսանդրեան ձեռագրում ներկայանում է որպէս Սաղմոսաց գրքի նախաբան: Եթէ այլեւս անկասկածելի է գրութեան ավանանական պատկանելութիւնը, բաւական դժուարին է շարադրման թուականի ճշտումը: Խաղաղ ձայներանգը թերեւս մատնանշում է՝ թէ սա պտուղն է Աղեքսանդրիոյ Պատրիարքի ծերութեան տարիների, երբ վերջնականօրէն վերադարձել էր իր թեմ (Յ66թ.), Նիկիայի հաւատամքի պաշտպանութեան համար սպառուած կեանքից յետոյ:

Իր մտերիմ Մարչէլինոսին, որը ծանրօրէն հիւանդ էր, Աթանասը եռանդազին խրախուսում է ուժ եւ միաթարութիւն փնտռել Սաղմոսների գրքում, մէջբերելով նաեւ այն՝ ինչ ինքն իր հերթին լսել էր հոգեւոր կեանքի ասպարէզում հմուտ մի վանականից: Իմաստուն վանականի անձում, որն Աթանասին առաջնորդում է ըմբռնելու Սաղմոսարանը, ոմանք կամենում են տեսնել գրական մի խաղ. այդ վանականի կերպարի ետեւում թաքնուած է ինքը Աթանասը: Բայց մենք գիտենք, որ Աղեքսանդրիոյ Պատրիարքը վանականների մեծագոյն բարեկամն էր: Պակումը մեծարում էր նրան որպէս «Աստուծոյ սուրբ ծառայ», «երանելի մարտիկ», եւ եթէ պակումեանները յանձինս Աթանասի գտան օգնութիւն ու հաստատութիւն հաւատքի մէջ, Աթանասն իր հերթին ապաստանեց նրանց մօտ, այն բազում աքսորներից մէկի ընթացքում՝ որոնք ստիպւում էր կրել արիանոսական հակամարտումների պատճառով: Եւ ոչ միայն սա. Աթանասի գրչին է պատկանում նաեւ միանձնների Հիմնադրի, առաջին վանականի՝ Անտոն Անապատականի կենսագրութիւնը: Հետեւաբար, մեծ հաւանականութեամբ, կարող է Պակումի կամ Անտոնի աշակերտներից մէկը լինել այն վանականը, որն Աթանասին առաջնորդում է հասկանալու եւ աղօթելու Սաղմոսարանը, ինչպէս նաեւ օգնում է Սաղմոսների լոյսի ներքոյ վերընթերցելու սեփական կեանքի իրադարձութիւնները: Նամակում մէկից աւելի անգամներ ենք հանդիպում արիոսականների պատճառով կրած տառապանքների մասին ակնարկների:

Եթէ թշնամիները արգելափակել են ելքի բոլոր ճանապարհները եւ չափից աւելի տրտմած ես, նոյնիսկ եթէ խռովուած ես, մի՛ յուսահատուիր, այլ աղօթիր: Եթէ աղաչանքդ ընդունուի, երախտագիտութիւնդ յայտնիր Աստուծոն, արտասանելով 76րդ սաղմոսը: Եթէ թշնամիները պնդում են, եթէ ներխուժում են Աստուծոյ տան սեմից ներս ու պղծում են այն, սպանում են Սրբերին ու նրանց դիակները որպէս կերակուր նետում են երկնքի թռչունների դիմաց, նրանց դաժանութիւնների ծանրութեան ներքոյ չվախենալու համար՝ տառապիր տառապողների հետ եւ աղօթիր Աստուծոն, արտասանելով 78րդ սաղմոսը (§ 21):

Իսկ մի քանի տող յետոյ.

Եթէ թշնամիներն ի մի են հաւաքուած ամէն կողմից, եթէ սպառնում են Աստուծոյ տանը եւ դաշնակցում են ընդդէմ հաւատքի, նրանց բազմաքանակութեան եւ ուժի դիմաց քաջութիւնդ չկորցնելու համար որպէս յոյսի խարիսխ ունես 82րդ սաղմոսը (§ 22):

Մի ա՛յլ հատուածում կարելի է նշմարել ուղղակի ակնարկ այն տարիներին, որոնց ընթացքում Աթանասը, հալածուելով կայսերական ոստիկանութեան կողմից, ապաստան է գտնում անապատի վանականների մօտ.

Նրանց, ովքեր կատաղի կերպով յարձակուում են վրադ ու կամենում են յափշտակել հոգիդ, դիմադրիր Աստծոյ հանդէպ հնազանդութեամբ եւ վստահ եղիր: Որքան աւելի են նրանք կատաղում, այնքան աւելի դու ենթարկուիր Տիրոջը եւ աղօթիր Յարգ սաղմոսի խօսքերով: Իսկ եթէ հալածանքների պատճառով քաշուում ես անապատ, մի՛ վախեցիր, այնպէս՝ որ կարծես թէ միայնակ լինէիր: Աստուած քո հետ այնտեղ է եւ Նրա առջեւ, արշալոյսին, երգիր Յարգ սաղմոսը (§ 20):

Աթանասը, որ Սաղմոսարանի աղօթքներում սովորել էր կարգալ իր կեանքի իմաստը եւ իր այդ կեանքը վերընծայել Տիրոջը, հրաւիրում է քաղել այդ պարտէզի պտուղները, որոնք մխիթարում, բժշկում ու կազդուրում են հաւատացեալին, դէպի Հօր տունն ուղղուած վերադարձի ճանապարհին: Ոչ—նմանութեան մէջ մոլորուած, մարդն այլեւս չի կարողանում ճանաչել եւ ոչ իսկ ինքն իրեն. ինքն իրեն օտար, ապրում է զգայագուրկ խելագար վիճակում: Սաղմոսների գրքում, մարդուն տրւում են ինքնաճանաչման եւ սրտի դարձի միջոցները: Դրանք իրենց մէջ հայելացնում են մարդկային զգացումները, սէրն ու ատելութիւնը, ուրախութիւնն ու վիշտը, վրէժխնդրութեան ցանկութիւնն ու խաղաղութեան բաղձանքը, արարչութեան գեղեցկութեան առջեւ սքանչացումը, տրամուլթիւնն ու խռովքը՝ կեանքի դժուարութիւնների դիմաց: Ոչ մի բան չի փոփոխում, չի մերժում, այլ ամէն բան ներկայացնում է մերկ, բացայայտ, որպէսզի ով ընթերցում է, ով փորձում է թոթովել այս խօսքերը, կարողանայ ճանաչել իր սրտի խորքերը, հին մարդը՝ որ տակաւին ապրում է իր ներսում, Քրիստոսով նոր մարդ դառնալու կոչը, Քրիստոս՝ որ իրենն էր դարձրել Սաղմոսների աղօթքը:

Սաղմոսների գիրքն ունի նաեւ մի իւրօրինակ շնորհ, արժանի՝ յատուկ ուշադրութեան: Բացի այն ամէնից՝ որով հաղորդակցւում եւ նմանում է (Աստուածաշնչի) միւս գրքերին, ունի նաեւ այս հրաշալի յատկութիւնը, որն իրենում քանդակուած ու շարադրուած կրում է իւրաքանչիւր հոգու իղձերն ու զգացումները, ինչպէս նաեւ կերպը՝ որով հոգին փոխւում է եւ ուղղւում, որպէսզի ով անփորձ է՝ կարողանայ, եթէ կամենում է, այս ամէնի պատկերը գտնել եւ տեսնել Սաղմոսարանում, կազմաւորելով իր անձը՝ ինչպէս գրուած է այնտեղ (§ 10):

Սաղմոսներն արտայայտում եւ կողմնորոշում են մեր զգացական աշխարհը, ուղղում, սրբազրում, կաղապարում են սրտի մտածումները, մեր դէմքի վրայ հայելացնելով Քրիստոսի Դէմքը: Տէրը

ոչ միայն ուսուցանեց, այլ նաեւ գործադրեց այն՝ ինչ ուսուցանեց, որպէսզի իւրաքանչիւր ոք, լսելով Նրա խօսքերը եւ նայելով Նրան ինչպէս պատկերի, ստանայ օրինակն այն բանի՝ որ պարտաւոր է անել, երբ լսում է. «Սովորեցէք ինձնից, որ հեզ եմ եւ սրտով խոնարհ» (Մտթ 11, 29): ... Տէրն ընծայում է իրեն որպէս օրինակ, որպէսզի ովքեր կամենում են՝ ունենան գործելու ուժը: Այս իսկ պատճառով, մեր մէջ Իր գալուստից առաջ յայտնեց ամէն բան սաղմոսերգուների միջոցով, որպէսզի ինչպէս յանձինս Իր ցոյց տուեց երկրային կատարեալ եւ երկնային մարդու օրինակները, այնպէս էլ իւրաքանչիւր ոք կարողանայ Սաղմոսների միջոցով ճանաչել իր հոգու իղձերն ու զգացումները, կարողանալու համար բժշկել դրանք ու սրբազրել (§ 13):

Մեզ, որ չգիտենք աղօթել, Աստուած տալիս է Սուրբ Գրքի աղօթքի վերածուած խօսքերը: Սաղմոսները, որոնցով աղօթել են հինկտակարանեան հաւատացեալների սերունդները, որոնցով աղօթել է Յիսուս, իրականացել են յանձինս Յիսուսի եւ դարձել են քրիստոնեայի աղօթքը: Սաղմոսներն աղօթում ենք Քրիստոսի հետ, մեր խօսքն ուղղելով Հօրը — եւ Հայրը կը ճանաչի մեզնում խօսքերն Իր Որդու — աղօթում ենք դրանք երկնքի

ու երկրի բոլոր Սրբերի հետ հաղորդակցութեամբ, որոնք Սաղմոսներում գտել եւ գտնում են սնունդ եւ օգնութիւն՝ դէպի Արքայութիւնն ուղղուած իրենց պանդխտութեան ընթացքում: Աթանասը յորդորում է ճշմարտութեամբ եւ պարզութեամբ ընդունել այս խօսքերը, թողնելով՝ որ դրանք սրբագրեն եւ դարձի բերեն մեզ, պայքարելով այն փորձութեան դէմ՝ որ մղում է փոխարինել դրանք մեր խօսքերով, մղում է «վերածել դրանք մեզ», փոխանակ մենք փոխուելու եւ դառնալու Աստծոյ խօսք:

Եւ թող որ Սաղմոսները չպաշարուեն մարդկային խաբէական խօսքերով, ո՛չ էլ որեւէ մէկը տեղի տայ Սաղմոսների խօսքերը ինչ որ մի կերպ փոխելու փորձութեանը, այլ թող որ ամենայն պարզութեամբ ընթերցուի ու արտասանուի այն՝ ինչ գրուած է, այնպէս՝ ինչպէս ասուած է, որպէսզի նաեւ այն մարդիկ՝ որոնք պարզեւել են մեզ Սաղմոսները, ճանաչելով իրենց խօսքերը՝ աղօթեն մեր համար (§ 31):

Սուրբ Հոգին, որ ներշնչել է սաղմոսերգուներին, «տեսնելով՝ թէ ինչպէս են կրկին ու կրկին հնչում Իրենից ներշնչուած խօսքերը» (§ 31), օգնութեան է հասնում մեզ եւ կամաց կամաց կերպարանափոխում է աղօթողին, առաջնորդում է նրան «աններդաշնակութիւնից՝ ներդաշնակութեան» (§ 29), արթնացնում է նրանում Քրիստոսի մտածումները (1Կր 2, 16), եւ այսպիսով,

մարդն ինքը դառնալով մի սաղմոսարան¹, հնագանդ՝ Հոգու հպումներին, իր բոլոր անդամներով եւ իր բոլոր զգացումներով ենթարկւում է՝ ծառայելու Աստծոյ կամքին (§ 28):

¹ Սաղմոսարան ասելով հասկանում ենք երկու բան. առաջին՝ Սաղմոսների գիրքը, երկրորդ՝ երաժշտական լարային այն գործիքը, որ նման է տաղին եւ որ գործածւում էր Սաղմոսները երգելով աղօթելու համար: Միմեանցից զանազանելու համար, առաջինը նշանակում ենք մեծատառով, մինչ երկրորդը՝ փոքրատառով:

**ՄԵՐ ՍՈՒՐԻ ՀԱՅՐ ԱԹԱՆԱՍ ԱՂԵՔՍԱՆԻՐԱՑՈՒ
ՆԱՄԱԿԸ ՄԵՐՉԵԼԻՆՈՍԻՆ
ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԵԼՆ ՄԱՍԻՆ**

1. Հիանում եմ բարի առաջադրութիւններովդ ի Քրիստոս, թանկագինդ իմ Մարչէլինոս: Քաջութեամբ ես կրում նաեւ ներկայ փորձութիւնը, թէեւ շատ ես տառապում, եւ չես լքում հոգեւոր կեանքի հրահանգները: Նամակդ ինձ հասցնողից տեղեկացայ՝ թէ ինչով ես զբաղուած հիւանդութիւնիցդ յետոյ. իմացայ՝ որ նուիրուել ես ամբողջ Աստուածաշնչի ընթերցանութեանը, բայց աւելի յաճախ կարդում ես Սաղմոսների գիրքը, մեծագոյն ջանասիրութեամբ փնտռելով հասկանալ իւրաքանչիւր Սաղմոսի ծածուկ իմաստը: Վաւերացնում եմ այդ ճիշդերդ: Ես նոյնպէս միեւնոյն սէրն եմ տածում այդ գրքի նկատմամբ, ինչպէս նաեւ ամբողջ Աստուածաշնչի նկատմամբ: Այսպիսի զգացումներով մի օր հանդիպեցի մի վանականի¹, որն եռանդուն էր հոգեւոր աշխատանքներում, եւ քեզ նոյնպէս կամենում եմ գրել՝ թէ ինչ պատմեց ինձ Սաղմոսարանի վերաբերեալ, որն ունէր իր ձեռքում: Պատմութիւնը հաճելի է, իսկ այն ամէնն՝ ինչ ասում է, թուում է համոզիչ: Ասում էր.

2. Որդեակ, ամբողջ Աստուածաշունչը, Հին եւ Նոր Կտակարանները, Աստծուց է ներշնչուած եւ օգտակար է ուսուցանելու համար, ինչպէս որ գրուած է (2Տմ 3, 16), բայց Սաղմոսների գիրքն իր ընթերցողներից պահանջում է խոնարհ² ուշադրութիւն: Իւրաքանչիւր գիրք, իրօք, ներկայացնում է իր իւրայատուկ ուսուցումը: Հնգամատեանն, օրինակի համար, պատմում է աշխարհի ստեղծումը եւ նահապետների հետ պատահած իրադարձութիւնները, Իսրայէլի ելքը Եգիպտոսից, Օրէնքի տրուելը: Եռամատեանը³ պատմում է խոստացուած երկրի բաժանումը, դատաւորների արարքները, Դաւթի ծննդաբանութիւնը: Թագաւորաց եւ Մնացորդաց գրքերը պատմում են թագաւորների ձեռնարկները, Եզրասի գործերը, ստրկութիւնից ազատագրումը, ժողովրդի վերադարձը, տաճարի ու քաղաքի վերաշինութիւնը: Մարգարէներն աւետում են Փրկչի գալստեանը վերաբերող մարգարէութիւնները, յիշեցնում են պատուիրանները, յանդիմանում են զանցառուներին, մարգարէանում են ազգերի վերաբերեալ: Սաղմոսների գիրքը, մինչդեռ, նման է պարտէզի. այն ամէնն՝ ինչ աւետում է միւս գրքերում, նրանում վերածուում է երգի: Բայց ներկայացնում է նաեւ իր յատուկ ուսուցումները, սաղմոսների ձեւով:

3. Օրինակի համար, Ծննդոցին յատուկ պատգամը երգում է 18րդ սաղմոսում. «Երկինքները պատմում են Աստծոյ փառքը, հաստատութիւնն աւետում է գործը Նրա ձեռքերի» (Սղմ 18, 1), եւ 23րդ սաղմոսում. «Տիրոջն է երկիրն իր ամբողջ պարունակութեամբ, տիեզերքը եւ բոլոր բնակիչները նրա: Նա ինքն այն հաստատեց ծովերի վրայ» (Սղմ 23, 1-2): 77րդ եւ 113րդ սաղմոսները Ելից, Թուոց եւ Երկրորդումն Օրինաց գրքերի իրադարձութիւնները երգում են հետեւեալ խօսքերով. «Երբ Իսրայէլը դուրս ելաւ Եգիպտոսից, Յակոբի տունը՝ բարբարոս ժողովրդից, Յուդան դարձաւ Նրա սրբավայրը, Իսրայէլը՝ Նրա տիրապետութիւնը» (Սղմ 113, 1-2): Միեւնոյն դէպքերը

¹ Բառացի՝ ծերունի (յունարէն՝ *ghéron*): Այս տիտղոսով է անուանուում Անտոն Անապատականը Աթանասի կողմից գրուած կենսագրութիւնում: Վանական յետագայ գրականութեան մէջ, «ծերունի» տիտղոսը տրուում է այն վանականին՝ որն հասել է հոգեւոր կեանքի հասունութեանը, անկախ մարմնական տարիքից:

² Բառացի՝ հնազանդ:

³ Այսինքն՝ Յեսուի, Դատաւորների եւ Հռութի գրքերը:

երգւում են նաեւ 104րդ սաղմոսում. «Առաքեց Մովսէսին, Իր ծառային, եւ Ահարոնին, որին ընտրել էր: Քամի երկրում նրանց մէջ դրեց խօսքերն իր նշանների ու Իր հրաշքների: Առաքեց խաւարը եւ եղաւ մութ, եւ ապստամբեցին ընդդէմ Իր խօսքերի: Փոխեց նրանց ջրերը արեան եւ սպանեց նրանց ձկները: Նրանց երկիրը լի եղաւ գորտերով, մինչեւ բնակարանները նրանց իշխանաւորների: Ասաց եւ եկան ճանճերն ու մոծակները, նրանց ամբողջ երկրով մէկ» (Սղմ 104, 26-31): Հնարաւոր է տեսնել, որ ամբողջ այս սաղմոսը եւ 104րդ սաղմոսը խօսում են միեւնոյն դէպքերի մասին: Իսկ ինչ վերաբերւում է քահանայութեանն ու վրանին, 28րդ սաղմոսը տաղաւարների տօնի կապակցութեամբ գոչում է. «Մատուցէք Տիրոջը, Աստուծոյ որդիներ, մատուցէք Տիրոջը խոյի ձագուկներ, մատուցէք Տիրոջը փառք ու պատիւ» (Սղմ 28, 1-2):

4. 106րդ սաղմոսում խօսւում է Նաւէի որդի Յեսուի եւ դատաւորների գործերի մասին, ասելով. «Հիմնեցին քաղաքներ, ուր կարող էին բնակուել, ցանեցին արտեր, տնկեցին որթաստաններ» (Սղմ 106, 36-37): Յեսուի օրոք, յիրաւի, Իսրայէլի ժողովուրդին տրուեց խոստացուած երկիրը: Իսկ այն՝ ինչ շարունակ կրկնւում է այդ սաղմոսում, թէ՛ «իրենց նեղութիւններում աղաղակեցին դէպի Տէրը եւ ազատեց նրանց իրենց նեղութիւններից» (Սղմ 106, 6.13.19.28), ակնարկում է Դատաւորների գրքին: Այդ օրերին, իրօք, երբ Իսրայէլացիներն աղերսագին աղօթում էին, Աստուած մէջտեղ էր հանում դատաւորներին եւ փրկում էր ժողովուրդը նրանցից՝ ովքեր տառապեցնում էին նրան: Որոշ իմաստով երգւում են նաեւ թագաւորների հետ կապուած իրադարձութիւնները, 19րդ սաղմոսում, ուր ասում է. «Ոմանք իրենց յոյսը դնում են կռքերի վրայ, ուրիշներ՝ ձիերի, մինչդեռ մեր յոյսը մեր Տէր Աստուծոյ անունն է: Նրանք որոգայթների մէջ բռնուելով՝ ընկան, մինչդեռ մենք կրկին ոտքի կանգնեցինք եւ մնում ենք ոտքի վրայ: Տէր, փրկիր թագաւորին եւ ունկն դիր մեզ, այն օրը՝ երբ կանչում ենք Քեզ» (Սղմ 19, 7-9): Իսկ ինչ վերաբերւում է Եզրասին, երգւում է 125րդ սաղմոսում. «Երբ Տէրը վերադարձրեց Սիոնից գերեվարուածներին, մենք մխիթարուեցինք» (Սղմ 125, 1): Եւ կրկին 121րդ սաղմոսում. «Ուրախացայ, երբ ասացին ինձ. Գնանք Տիրոջ տուն: Արդէն մեր ոտքերը սեմիդ էին, Երուսաղէմ: Երուսաղէմը կառուցուած է որպէս ամուր քաղաք, որին բոլորս մասնակցում ենք: Այնտեղ բարձրացան տոհմերը, Տիրոջ տոհմերը, վկայութիւն՝ Իսրայէլի համար» (Սղմ 121, 1-4):

5. Գրեթէ իւրաքանչիւր սաղմոս հաղորդակցութեան մէջ է մարգարէների հետ: Որ Փրկիչը գալու է եւ որ Աստուած է Նա՝ որ գալու է մեր մէջ, ասում է 49րդ սաղմոսում. «Գալու եւ յայտնուելու է Տէրը, մեր Աստուածը, եւ չի լուելու» (Սղմ 49, 3), եւ 117րդ սաղմոսում. «Օրհնեալ է Նա՝ որ գալիս է Տիրոջ անունով: Օրհնեցինք Նրան Տիրոջ տնից: Աստուած, Տէրը, ծագեց մեր վրայ» (Սղմ 117, 26-27): Եւ որ Նա՝ որ գալիս է, Հօր Խօսքն է, երգւում է 106րդ սաղմոսում. «Առաքեց Իր Խօսքը եւ բժշկեց նրանց, ազատեց նրանց իրենց ապականութիւններից» (Սղմ 106, 20): Նա՝ որ գալիս է, Աստուած է, եւ Խօսքն է՝ որ առաքւում է: Իմանալով՝ որ այդ Խօսքը Աստուծոյ Որդին է, սաղմոսերգուն հնչեցնում է Հօր ձայնը 44րդ սաղմոսում. «Սիրտս բարի Խօսք բխեց» (Սղմ 44, 2), եւ տակաւին 109րդ սաղմոսում. «Առաւօտեան աստղից առաջ ծնեցի քեզ» (Սղմ 109, 3): Ուրիշ ո՞ւմ մասին կարելի է ասել «Հօրից ծնուած», եթէ ոչ միայն՝ Խօսքի եւ Իր Իմաստութեան մասին: Իմանալով՝ որ Նրան էր Հայրը ասում. «Թող լինի լոյսը եւ հաստատութիւնը եւ միւս բոլոր արարածները» (Հմմտ. Ծնդ 1, 3-26), Սաղմոսների գիրքը սրա մասին նոյնպէս խօսում է 32րդ սաղմոսում. «Տիրոջ Խօսքով ստեղծուեցին երկինքները, Նրա բերանի շունչով՝ նրանց բոլոր գօրութիւնները» (Սղմ 32, 6):

6. Եւ Սաղմոսների գիրքը չի անգիտացել, որ Նա՝ որ գալիս է, Քրիստոս¹ է: Ընդհակառակն, ճիշտ սրա մասին է խօսւում 44րդ սաղմոսում. «Գահդ, ո՛վ Աստուած, յաւիտեանս յաւիտենից է: Ուղղութեան գաւազան է արքայութեանդ գաւազանը: Սիրեցիր արդարութիւնը եւ ստեցիր անօրէնութիւնը: Ահա սրա համար իսկ օձեց քեզ Աստուած, քո Աստուածը, ցնծութեան իւղով, նախընտրելով քեզ քո ընկերներից» (Սղմ 44, 6-7): Իսկ որպէսզի ոչ ոք չկարծի՝ թէ Նա գալիս է երեւութապէս միայն, 86րդ սաղմոսում աւետում է՝ որ մարդանալու է եւ որ Նա է՝ որի միջոցով ստեղծուել է ամէն բան. «Մայր Սիոնն ասելու է. Մի մարդ, մի մարդ է ծնուել նրանում, եւ Բարձրեալն Ինքն է դրել նրա հիմքերը» (Սղմ 86, 5), իսկ սա հաւասար է ասելու. «Եւ Խօսքն Աստուած էր: Ամէն բան ստեղծուեց իր միջոցով եւ Խօսքը մարմին եղաւ» (Յվզ 1, 1.2.14): Այս իսկ պատճառով, ճանաչելով Կոյսից ծնունդը, չլուեց, այլ իսկոյն, որոչ կերպով, յայտարարեց 44րդ սաղմոսում. «Լսիր, դուստր իմ, եւ տես. ունկն դիր, մոռացիր ժողովուրդդ եւ տունդ հայրենի, քանի որ թագաւորն ինքը ցանկացաւ զեղեցկութիւնդ» (Սղմ 44, 10-11)²: Բայց կրկին, այս խօսքերը նման են Գաբրիէլի կողմից արտասանուածներին. «Ողջոյն քեզ, շնորհներով լի, Տէրը քեզ հետ է» (Ղկա 1, 28): Եւ Նրան Քրիստոս անուանելուց յետոյ, անմիջապէս ցոյց է տալիս մարդկային ծնունդը կոյսից, ասելով. «Լսիր, դուստր» (Սղմ 44, 10): Գաբրիէլը Մարիամին դիմում է անունով, որովհետեւ օտար է նրա ծնունդին, մինչ Դաւիթն իրաւացիօրէն անուանում է նրան դուստր, որովհետեւ Մարիամը Դաւիթի սերունդից էր:

7. Մարդեղութիւնը աւետելուց յետոյ, Սաղմոսները յայտնում են՝ թէ չարչարանքների էր ենթարկուելու իր մարմնով: 2րդ սաղմոսում, կանխաւ տեսնելով հրեաների դաւադրութիւնը, երգւում է. «Ինչո՞ւ խռովուեցին ազգերը եւ ժողովուրդներն ունայնութիւններ մտածեցին: Շտապեցին երկրի թագաւորները, իշխաններն ի մի ժողովուրդեցին ընդդէմ Տիրոջ եւ իր Քրիստոսի» (Սղմ 2, 1-2): 21րդ սաղմոսում Փրկիչն Ինքը յայտնում է իր մահուան կերպը. «Վերածեցիր ինձ մահուան փոշու, բազում շներ շրջապատեցին ինձ, չարագործների ոհմակը չորս կողմս հաւաքուեց: Ծակեցին ձեռքերս ու ոտքերս, բոլոր ոսկորներս հաշուեցին, նայեցին ինձ ու դիտեցին, բաժանեցին զգեստներս եւ պատմուճանիս վրայ վիճակ նետեցին» (Սղմ 21, 15-18): Զեռքերն ու ոտքերը ծակելը ուրիշ ի՞նչ է մատնանշում, եթէ ոչ միայն՝ խաչը: Այս բոլոր բաներն ուսուցանելուց յետոյ, Սաղմոսարանն աւելացնում է՝ որ Տէրն այս բոլորը կրեց ո՛չ թէ Ինքն իր, այլ մեր համար: Եւ կրկին իր անունից ասում է 87րդ սաղմոսում. «Վրաս կուտակուեց բարկութիւնդ» (Սղմ 87, 8). եւ 68րդ սաղմոսում. «Ինչը որ չեմ գողացել՝ պարտաւոր եմ ետ վերադարձնել» (Սղմ 68, 5): Զմեռաւ անձնական յանցանքների համար, այլ մեր համար չարչարուեց եւ իր վրայ կրեց զայրոյթը՝ որին արժանացել էինք մեր օրինազանցութիւններով, ինչպէս ասել է տալիս Եսայի մարգարէին. «Իր վրայ առաւ մեր տկարութիւնները» (Ես 53, 4), եւ ինչպէս որ ասում է 137րդ սաղմոսում. «Տէրը կը փոխհատուցի ինձ» (Սղմ 137, 8): Սուրբ Հոգին նոյնպէս հաստատում է 71րդ սաղմոսում. «Փրկելու է աղքատների որդիներին եւ խոնարհեցնելու է զրպարտողներին, որովհետեւ ազատել է աղքատին զօրաւորի ձեռքից, եւ խեղճին՝ որի համար ուրիշ օգնութիւն չկայ» (Սղմ 71, 4.12):

¹ Այսինքն՝ օձեալ:

² Այս հատուածի վերագրումը Մարիամին հազուադէպ է Աթանասի ժամանակներում: 44րդ սաղմոսը սովորաբար շղկապւում էր Եկեղեցուն կամ առաւել յատուկ կերպով նրանց՝ ովքեր ուխտում էին կուսակրօն ապրել:

8. Սաղմոսարանը կանխաւ աւետում է նաեւ Նրա մարմնով համբարձումը երկինք եւ հաստատում է 23րդ սաղմոսում. «Վերամբարձէք, իշխաններ, ձեր դուները: Վեր բարձրացէք, դուներ յաւիտենական, թող որ ներս մտնի փառքի թագաւորը» (Սղմ 23, 7), եւ 46րդ սաղմոսում. «Համբարձաւ Աստուած օրհնութեամբ, Տէրը՝ շեփորի հնչմամբ» (Սղմ 46, 5): Աւետում է նաեւ գահակալումը եւ ասում է 109րդ սաղմոսում. «Տէրն ասաց իմ Տիրոջը. Նստիր իմ աջ կողմում, մինչեւ որ թշնամիներդ պատուանդան դնեմ ոտքերիդ ներքոյ» (Սղմ 109, 1): 9րդ սաղմոսում բարձրաձայն հռչակում է սատանայի մօտակայ կործանումը. «Քահին բազմեցիր, Դու՛ որ դատում ես արդարութեամբ: Յանդիմանեցիր ժողովուրդներին եւ ամբարիշտը մեռաւ» (Սղմ 9, 4-5): Չի թաքցնում նաեւ այն՝ որ Տէրը դատելու ամէն իրաւունք ստացել է Հօրից, այլ 71րդ սաղմոսում մարգարէանում է Նրա գալուստը որպէս մարդկութեան դատաւոր. «Ո՛վ Աստուած, դատաստանդ թագաւորին տուր, թագաւորի որդուն տուր արդարութիւնդ, որպէսզի դատի ժողովուրդդ արդարութեամբ եւ աղքատներդ՝ ըստ իրաւունքի» (Սղմ 71, 1-2): Իսկ 49րդ սաղմոսում. «Կը կանչի երկինքն ի վերուստ եւ երկիրը, դատելու համար Իր ժողովուրդին: Երկինքներն աւետելու են Նրա արդարութիւնը. Աստուած դատաւոր է» (Սղմ 49, 4-6): Իսկ 81րդ սաղմոսում. «Աստուած՝ աստուածների ժողովում է: Նրանց մէջ կանգնած՝ դատում է նրանց» (Սղմ 81, 1): Այս գրքից կարելի է ըմբռնել նաեւ հեթանոսների կոչումը, յատկապէս 46րդ սաղմոսից. «Ծափահարեցէք, ժողովուրդներ, ցնծութեան ձայնով աղաղակեցէք առ Աստուած» (Սղմ 46, 1): Իսկ 71րդ սաղմոսում. «Նրա առջեւ երկրպագելու են եթովպացիները եւ Նրա թշնամիները լզելու են հողը: Թարսիսի թագաւորներն ու կղզիները ընծաներ են նուիրելու, պարգեւներ են բերելու Արաբիայի ու Սաբայի թագաւորները: Երկրպագելու են Նրան երկրի բոլոր թագաւորները, բոլոր ժողովուրդները ծառայելու են Նրան» (Սղմ 71, 10-11): Այս բոլորը երգւում է Սաղմոսների գրքում. միւս գրքերից իւրաքանչիւրում մարգարէացում է եւ կանխաւ աւետում:

9. Վանականը նաեւ ասում էր՝ որ չէր անգիտանում, որ Աստուածաշնչի գրքերից իւրաքանչիւրը պարունակում է իրենում յատկապէս Փրկչի աւետումը, աւետում՝ որ ընդհանուր է բոլոր գրքերի համար, նրանց միջեւ գոյութիւն ունեցող ներդաշնակութիւնն է, որ գործն է Սուրբ Հոգու: Եւ ինչպէս որ Սաղմոսարանում հնարաւոր է գտնել այն՝ ինչ յատուկ է միւս գրքերին, նմանապէս նրանց մէջ յաճախ հանդիպում ենք տողերի, որ յատուկ են Սաղմոսարանին: Մովսէսը յօրինում է մի երգ (Հմմտ. Ել 15, 1-18), Նսային երգում է (Հմմտ. Ես 42, 1-17; 49, 1-6), Ամբակումն աղօթում է երգելով (Հմմտ. Ամբ 3, 1-19): Իւրաքանչիւր գրքում հնարաւոր է հանդիպել մարգարէութիւնների, պատուիրանների ու պատմութիւնների: Միեւնոյն Հոգին բոլորի մէջ է, եւ իւրաքանչիւրը, ստացած պարգեւի համաձայն, տնօրինում եւ լիութեան է հասցնում շնորհը՝ որ տրուել է իրեն, կարեւորութիւն չունի՝ թէ խօսքը վերաբերւում է մարգարէութեան, օրէնքին, պատմական դէպքերի յիշատակմանը կամ սաղմոսների պարգեւին: Քանի որ մէկ եւ միակ եւ միեւնոյնն է Հոգին, որ բաշխում է բոլոր շնորհները, եւ ըստ Իր բնութեան անբաժանելի է, իւրաքանչիւր գրքում ներկայ է ամբողջութեամբ: Այնուամենայնիւ, կան զանազան յայտնութիւններ եւ բաշխումներ իւրաքանչիւրի համար (Հմմտ. 1Կր 12, 4-7), եւ իւրաքանչիւրը, ինչպէս խոստացել է Հոգին, տնօրինում է խօսքը այդ պահի կարիքների համաձայն: Այսպէս, ինչպէս արդէն ասացի, Մովսէսը, որ օրինադիրն է, երբեմն մարգարէանում է եւ երբեմն էլ երգում, իսկ մարգարէներն իրենց մարգարէութիւններում երբեմն հրամայում են ու պատուիրում. «Սրբուեցէ՛ք, մաքրուեցէ՛ք» (Ես 1, 16). «Սիրտդ մաքրի՛ր անօրէնութիւններից, Երուսաղէմ» (Եր 4, 14): Երբեմն պատմում են պատմական դէպքեր. Դանիէլ մարգարէն, օրինակի համար, պատմում է Սուսանի (Հմմտ. Դան 13),

Եսային՝ Ռափսակի ու Սենեքերիմի պատմութիւնները (Հմմտ. Ես 36-37): Այսպիսին է նաեւ Սաղմոսների գրքի պարագան, որի յատուկ պարգեւը երգն է, այսինքն՝ բարձրաձայն երգելը այն՝ ինչը որ միւս գրքերում ասում է պատմութեան ձեւով, ինչպէս արդէն ասացինք, որոշ հատուածներում տալիս է նաեւ պատուիրաններ. «Հեռացի՛ր բարկութիւնից, մի կողմ թող գայրոյթը» (Սղմ 36, 8). «Հեռացի՛ր չարիքի ճանապարհներից եւ գործիր բարին: Փնտուր եւ հետեւիր խաղաղութեանը» (Սղմ 33, 13): Երբեմն էլ պատմում է Իսրայէլի անցեալը եւ մարգարէանում է Փրկչի վերաբերեալ, ինչպէս ասում էինք վերեւում:

10. Բոլոր գրքերի մէջ, ուրեմն, ճանաչում ենք Հոգու այս ընդհանուր շնորհը. նոյնը գտնում ենք իւրաքանչիւրում, նոյնը՝ բոլորի մէջ, ինչպէս պահանջում է կարիքը եւ ինչպէս կամենում է Հոգին: Այդ կարիքի պարագային տարբերութիւն չունի նուազն ու առաւելը, քանի որ իւրաքանչիւրը կատարում եւ ամբողջական լիութեանն է հասցնում իրեն յանձնուած պաշտօնը: Բայց Սաղմոսների գիրքն ունի նաեւ իրեն միայն բնորոշ շնորհը, որ արժանի է յատուկ ուշադրութեան: Բացի այն ամէնից՝ որով հաղորդակցութեան մէջ է միւս գրքերի հետ, ունի նաեւ այս սքանչելի յատկութիւնը. իրենում քանդակուած եւ շարադրուած կրում է իւրաքանչիւր հոգու իղձերն ու զգացումները, ինչպէս նաեւ կերպը՝ որով հոգին փոխւում է եւ ուղղւում, որպէսզի ով անփորձ է՝ կարողանայ, եթէ կամենում է, այս ամէնի պատկերը գտնել եւ տեսնել Սաղմոսարանում, կազմաւորելով իր անձը՝ ինչպէս գրուած է այնտեղ: Միւս գրքերում պարզապէս լսում ենք այն՝ ինչ պատուիրում է Օրէնքը, թէ ինչ պէտք է անել եւ ինչ պէտք է անել: Լսում ենք նաեւ մարգարէութիւնները, որոնք ուրիշ բան չեն անում, եթէ ոչ միայն՝ աւետումը Փրկչի գալստեան: Ուշադիր ունկնդրում ենք նաեւ պատմութիւնները, որոնց միջոցով ծանօթանում ենք թագաւորների ու Սրբերի գործերին: Բայց սաղմոսների գրքում, այս բաներն ուսանելուց բացի, ով ունկնդրում է՝ հասկանում եւ սովորում է փափաքներն իր սեփական հոգու, եւ կրքերը ճանաչելուց յետոյ, որ տառապեցնում են իրեն եւ պահում բանտարկուած, կարող է այս գրքից ստանալ նաեւ օրինակն այն ամէնի՝ որ պարտաւոր է ասել: Եւ այսպիսով, չի գոհանում ցրուած ունկնդրելով, այլ սովորում է՝ թէ ինչ է պարտաւոր ասել եւ անել՝ կրքերից բժշկուելու համար: Միւս գրքերում նոյնպէս կան պատուիրաններ, որ արգելում են չարը, բայց սրանում օրինակով ցոյց է տրւում մեզ՝ թէ ինչպէս կարող ենք խուսափել չարից: Պատուիրում է, օրինակի համար, ապաշխարել: Ապաշխարել¹ նշանակում է դադարել մեղանչելուց: Այս գրքում յստակ ներկայացւում է՝ թէ ինչպէս ենք զղջում եւ թէ ինչ պէտք է ասել զղջման վերաբերեալ: Եւ դարձեալ, Պօղոս Առաքեալն ասում է. «Նեղութիւնը հոգում ծնում է համբերութիւն, համբերութիւնը՝ փորձուած առաքինութիւն, փորձուած առաքինութիւնը՝ յոյս, իսկ յոյսը երբեք ամօթով չի թողնում» (Հռմ 5, 3-5), մինչ Սաղմոսներում գրուած է եւ բացատրւում է՝ թէ ինչպէս է հարկաւոր կրել նեղութիւնները, թէ ինչ է հարկաւոր ասել նեղութիւնների ընթացքում եւ յետոյ, թէ ինչպէս է իւրաքանչիւր հոգի փորձւում եւ թէ որոնք են Տիրոջը յուսացողների խօսքերը: Դարձեալ, տրւում է ամէն իրավիճակում երախտագիտութիւն յայտնելու պատուիրանը, բայց Սաղմոսները նաեւ ուսուցանում են՝ թէ ինչ է պարտաւոր ասել նա՝ ով կամենում է երախտագիտութիւն յայտնել: Ուրիշներից լսում ենք. «Ով կամենում է աստուածապաշտութեամբ ապրել, հալածուելու է» (2Տմ 3, 12), մինչ Սաղմոսներից իմանում ենք՝ թէ ինչ են պարտաւոր ասել նրանք՝ ովքեր գերծ են հալածանքներից, կամ թէ ինչ խօսքերով պէտք է դիմել Աստծուն հալածանքների ընթացքում եւ երբ ազատւում ենք նրանցից: Պատուիրուած է մեզ օրհնել Տիրոջը եւ փառաւորել Նրան, բայց Սաղմոսներում մատնանշւում է նաեւ՝ թէ ինչպէս պէտք է օրհնենք Տիրոջը եւ թէ ինչպիսի խօսքերով կարող ենք փառաբանել Նրան պատշաճ կերպով: Բոլոր պարագաների համար Սաղմոսներում կարող ենք աստուածային երգեր գտնել, յարմար՝ մեզ, մեր զգացումներին, մեր տուեալ իրավիճակին:

¹ Կամ՝ զղջալ:

11. Սաղմոսներն ունեն նաեւ այս սքանչելի յատկութիւնը: Միւս գրքերի ընթերցանութեան ընթացքում, այն՝ ինչ Սրբերն ասում են որոշակի դէպքերի մասին, նոյնը ընթերցողը նոյնպէս վերագրում է այն պարագաներին՝ որոնցում այդ խօսքերը գրուել են: Ով ունկնդրում է, այսինքն, իրեն օտար է զգում, այնպէս՝ որ յիշատակուած արարքներն ու իրադարձութիւնները արթնացնում են միայն հիացում, եռանդ, նմանուելու փափաք: Ով ընթերցում է Սաղմոսների գիրքը, մինչդեռ, Փրկչին վերաբերուող մարգարէութիւնները կարդում է ինչպէս միւս գրքերում, լի զմայլանքով ու երկրպագութեամբ, իսկ միւս Սաղմոսներն ընթերցում է այնպէս՝ որ կարծես թէ իրենը լինէին: Ով ունկնդրում է, նաեւ ով արտասանում է, յուզւում է եւ իր զգացումները համաձայնեցնում է երգի խօսքերին, կարծես թէ իրենը լինէին: Առաւել հասկանալի լինելու համար, չեմ խուսափում նոյն բաները կրկնելուց, ինչպէս վարւում էր երանելի Առաքեալը (Հմմտ. Գղտ 1, 9): Աստուածաշնչի խօսքերի մեծամասնութիւնը նահապետների խօսքերն են: Մովսէսը խօսում էր, Աստուած՝ պատասխանում: Եղիան եւ Եղիսն Կարմեղոս լեռան վրայ կանչում էին Տիրոջը եւ միշտ ասում. «Կեցցէ Տէրը, որի ներկայութեանն եմ ես այսօր» (1Թգ 17, 1): Միւս սուրբ մարգարէների խօսքերը մեծ մասամբ վերաբերւում են Փրկչին, ապա ժողովուրդներին եւ Իսրայէլին, բայց մեզնից ոչ ոք չէր գործածի նահապետների խօսքերն այնպէս՝ կարծես թէ իրենը լինէին, ո՛չ էլ կը համարձակուէր հետեւել կամ կրկնել խօսքերը Մովսէսի, կամ Աբրահամի, որ վերաբերւում էին վերջինիս ծառային, կամ Իսմայէլին, կամ մեծն Իսահակին: Եւ ոչ իսկ կարիքի կամ մեծագոյն անհրաժեշտութեան դէպքում որեւէ մէկը կը համարձակուէր իրենը դարձնել այդ խօսքերը: Նոյնիսկ եթէ մէկը տառապէր տառապողների հետ եւ փափաքէր լաւագոյն իրողութիւններ, երբեք չէր կրկնի Մովսէսի խօսքերը. «Յայտնուիր ինձ» (Ել 33, 13), կամ դարձեալ. «Եթէ ներելու ես նրանց մեղքերը, ներիր: Իսկ եթէ չես ներելու, ջնջիր ինձ այն գրքից՝ որ գրել ես» (Ել 32, 32): Ոչ ոք կարող է երբեւէ դիմել մարգարէների խօսքերին, պախարակելու կամ գովելու համար նրանց՝ ովքեր գործում են մարգարէների կողմից պախարակուած կամ գովուած արարքներ: Ոչ ոք կարող է հետեւել Եղիային, իրենը դարձնելով նրա խօսքերը. «Կեցցէ Տէրը, որի ներկայութեանն եմ ես այսօր» (1Թգ 17, 1): Ով իր ձեռքն է վերցնում այս գրքերը, յստակ կերպով գիտէ՝ որ նրանց մէջ պարունակուած խօսքերը չպէտք է ընթերցի այնպէս՝ կարծես թէ իրենը լինէին, այլ որպէս խօսքերը Սրբերի կամ նրանց՝ որոնց վերաբերւում են: Սաղմոսների պարագային, մինչդեռ, սա՛ է հիանալի, որ Փրկչին եւ ժողովուրդներին վերաբերուող մարգարէութիւններից բացի, միւս խօսքերը ընթերցողի կողմից կարդացւում են այնպէս՝ կարծես թէ իրենը լինէին, իւրաքանչիւր ոք երգում է այնպէս՝ կարծես թէ գրուած լինէին իր համար, եւ ընդունում ու կարդում է դրանք ո՛չ որպէս ուրիշների կողմից եւ ուրիշների համար գրուած, այլ վարւում է որպէս մէկը՝ որ խօսում է ինքն իր մասին: Այն՝ ինչ այնտեղ ասում է, դնում է Աստուծոյ առաջ այնպէս՝ կարծես թէ ինքն է ասել դրանք ու արել: Ով երգում է Սաղմոսները, նրանց խօսքերի առաջ երկիւղ չի զգում, ինչպէս նահապետների, Մովսէսի եւ միւս բոլոր մարգարէների խօսքերի դիմաց, այլ ճիշտ ընդհակառակը՝ համարձակուում է արտասանել այդ խօսքերը որպէս իրենը, գրուած՝ իր մասին խօսելու համար: Սաղմոսներն, իրօք, արտայայտում են երկու վարքագծերը միասին. այն հոգիների՝ որոնք պահել են պատուիրանները, եւ միւսներին՝ որոնք որոշ կէտերում թերացել են: Արդ, իւրաքանչիւր մարդ անխուսափելիօրէն գտնւում է մէկ կամ միւս իրավիճակում, եւ իւրաքանչիւր ոք կարող է գործածել իր իրավիճակին յարմար խօսքերը, լինի պատուիրանները պահողների կամ թերացողների շարքում:

12. Ինձ թւում է՝ որ Սաղմոսներն իրենց երգողի համար դառնում են մի հայելի, որպէսզի կարողանայ տեսնել ինքն իրեն եւ իր հոգու իղձերն ու փափաքները, որպէսզի կարողանայ արտասանել Սաղմոսներն այդպիսի զգացումներով: Նաեւ նա՝ ով ունկնդրում է, սաղմոսերգութիւնն ընդունում է այնպէս՝ կարծես թէ ասուել են իր համար: Սեփական խղճի կողմից համոզուելով, գղջման զգացումներով բռնուած, դարձի է գալիս, կամ էլ լսելով Աստուծոյ հանդէպ յոյսի եւ հաւատացեալներին տրուած պաշտպանութեան մասին՝

ուրախանում է իրեն պարգեւուած շնորհի համար եւ սկսում է երախտագիտութիւն յայտնել Աստծուն: Եթէ արտասանում կամ երգում է Յրդ սաղմոսը, խորհրդածելով իր նեղութիւնների շուրջ, իրենն է համարում սաղմոսի խօսքերը. յայնժամ արտասանում է 11րդ եւ 16րդ սաղմոսները, Աստծոյ հանդէպ իր վստահութիւնն ու աղօթքը արտայայտելու համար. արտասանում է նաեւ 50րդ սաղմոսը, կարծես թէ զղջման այդ խօսքերն իրենը լինէին: Նաեւ 53րդ, 55րդ, 100րդ, 41րդ սաղմոսներն արտասանում է ո՛չ թէ այնպէս՝ կարծես թէ ուրիշն է հալածանքների առարկան, այլ ինքն իրեն համարելով նա՛ որ տառապում է, Տիրոջ առջեւ այդ խօսքերն արտասանում է որպէս իրենները: Այսպիսով, իւրաքանչիւր Սաղմոս Սուրբ Հոգու կողմից ներշնչուել ու շարադրուել է այնպէս՝ որ հասկացնում է մեզ զգացումները մեր հոգու, ինչպէս ասում էի սկզբում, եւ մղում է մեզ արտասանելու Սաղմոսները որպէս մեր համար գրուած, որպէս մեր իսկ խօսքերը, յիշեցնելու համար մեզ մեր զգացումները եւ սրբագրելու համար մեր կենսածեւրը: Այն ամէնը՝ որ գրուել է սաղմոսերգուի կողմից, կարող է որպէս օրինակ ծառայել մեզ:

13. Եւ ճիշտ այսպիսին է նաեւ այն պարգեւը, որ շնորհեց մեզ Փրկիչը: Մեր համար մարդանալով, մեր համար մահուան ենթարկեց իր մարմինը, մեզ բոլորիս մահից ազատելու համար: Բայց կամենալով յայտնել մեզ իր երկնային եւ աստուածահաճոյ վարքը, իր անձում տուեց մեզ դրա օրինակը, որպէսզի այդուհետեւ դիւրութեամբ չխաբուէինք թշնամուց, քանի որ ունենք մեր վստահութեան գրաւականը. սատանայի հանդէպ Նրա յաղթանակը: Այս իսկ պատճառով, ոչ միայն ուսուցանեց, այլ նաեւ գործադրեց այն՝ ինչ ուսուցանեց, որպէսզի ամէն ոք լսելով իր խօսքերը եւ դիտելով Նրան ինչպէս պատկերի, ստանայ օրինակն այն ամէնի՝ որ պարտաւոր է անել, երբ լսում է. «Սովորեցէք ինձնից, որ հեզ եմ եւ սրտով խոնարհ» (Մտթ 11, 29): Առաքինութեան աւելի կատարեալ ուսուցում անհնարին է գտնել, քան այն՝ որ Տէրը յայտնեց իր անձում: Համբերութիւն, սէր դիմացինի հանդէպ, բարութիւն, քաջութիւն, ողորմութիւն, արդարութիւն. բոլոր առաքինութիւնները Նրանում են, այնպէս՝ որ նրան՝ ով ճանաչել է Տիրոջ մարդկային կեանքը, ոչինչ չի պակասում իմանալու՝ թէ ինչ է առաքինութիւնը: Սա քաջ գիտէր Պօղոս Առաքեալը, երբ ասում էր. «Նմանուեցէք ինձ, ինչպէս ես՝ Քրիստոսին» (1Կր 11, 1): Յոյների մօտ օրինադիրներն ունեն միմիայն խօսքի պարգեւը, մինչ Տէրը, տիեզերքի ճշմարիտ Տէրը, որ հոգատարութիւն է ցուցաբերում իր ձեռքերի գործի նկատմամբ, ոչ միայն տալիս է օրէնքը, այլ որպէս օրինակ ներկայացնում է ինքն իրեն, որպէսզի ովքեր կամենում են՝ ունենան գործելու ուժը: Այս իսկ պատճառով, մեր մէջ իր գալուստից առաջ, յայտնեց ամէն բան սաղմոսերգուների միջոցով, որպէսզի ինչպէս յանձինս իր ցոյց տուեց երկրային կատարեալ եւ երկնային մարդու օրինակները, այնպէս էլ իւրաքանչիւր ոք կարողանայ Սաղմոսների միջոցով ճանաչել իր հոգու իղձերն ու զգացումները, կարողանալու համար բժշկել դրանք եւ սրբագրել:

14. Եթէ լաւ է աւելի համոզիչ ապացոյցների դիմելը, ամբողջ Աստուածաշունչը ուսուցանում է առաքինութիւնն ու ճշմարիտ հաւատքը, բայց Սաղմոսների գիրքը ընծայում է նաեւ պատկերը հոգու վարքագծի: Ով ներկայանում է թագաւորին, ուսումնասիրում է իր շարժումներն ու խօսքերը, անդաստիարակութեան պատճառով դուրս չվճռուելու համար: Այսպիսով, նրան՝ ով վազում է առաքինութիւնը ձեռքբերելու համար՝ եւ կամենում է ճանաչել մարմնաւոր կեանքի ընթացքում Տիրոջ ունեցած վարքը, աստուածային Գիրքը Սաղմոսների ընթերցանութեամբ նախ յիշեցնում է՝ թէ որոնք են հոգու զգացումները, ապա կազմաւորում եւ կրթում է նրանց՝ ովքեր հետեւում են այս խօսքերին:

¹ Մրցախաղերի ընթացքում մարզիկները վազում են դափնեպսակին հասնելու համար, մինչ Քրիստոսի մարզիկները վազում են առաքինութեանը հասնելու համար, այսինքն՝ գործով փաստելու Քրիստոսի հանդէպ տածած իրենց սէրը: Վազքի մարզիկի եւ Քրիստոսի հաւատացեալի միջեւ այս համեմատութիւնը Պօղոս Առաքեալինն է (Հմմտ. 1Կր 9, 24-27):

Սաղմոսարանի վերաբերեալ առաջին անդրադարձութիւնն այն է՝ որ կան պատմական, քաջալերական, մարգարէական բնոյթ կրող Սաղմոսներ, ինչպէս նաեւ ուրիշներ՝ որոնք աղաչանքի կամ փառաբանութեան ձեւով են շարադրուած: Պատմական բնոյթ ունեցողներն են 18րդ, 43րդ, 48րդ, 49րդ, 72րդ, 76րդ, 77րդ, 88րդ, 89րդ, 106րդ, 113րդ, 126րդ, 136րդ սաղմոսները: Աղօթքի բնոյթ ունեն 16րդ, 67րդ, 89րդ, 101րդ, 131րդ, 141րդ սաղմոսները: Երկխօսութեան, աղօթքի, խնդրանքի բնոյթ ունեն 5րդ, 6րդ, 7րդ, 11րդ, 12րդ, 15րդ, 24րդ, 27րդ, 30րդ, 34րդ, 37րդ, 42րդ, 53րդ, 54րդ, 55րդ, 56րդ, 58րդ, 59րդ, 60րդ, 63րդ, 82րդ, 85րդ, 87րդ, 137րդ, 139րդ, 142րդ սաղմոսները: Երկխօսութեան եւ երախտագիտութեան յայտնման բնոյթ ունի 138րդ սաղմոսը: Միմիայն երկխօսութեան բնոյթ ունեն 3րդ, 25րդ, 68րդ, 69րդ, 70րդ, 75րդ, 78րդ, 79րդ, 108րդ, 122րդ, 128րդ, 130րդ սաղմոսները: Փառաբանութեան բնոյթ ունեն 9րդ, 74րդ, 91րդ, 104րդ, 105րդ, 106րդ, 107րդ, 110րդ, 117րդ, 135րդ, 137րդ սաղմոսները: Միաժամանակ փառաբանութեան եւ պատմութեան բնոյթ ունեն 9րդ, 74րդ, 105րդ, 106րդ, 117րդ, 137րդ սաղմոսները: 110րդ սաղմոսը փառաբանութիւնը միացնում է պաշտամունքին ու պատմութեանը: 36րդ սաղմոսը խրատի եւ զգուշացման սաղմոս է: Մարգարէական բնոյթ ունեն 20րդ, 21րդ, 44րդ, 46րդ, 75րդ սաղմոսները: 109րդ սաղմոսը աւետարանումը միացնում է մարգարէութեանը: Կոչման եւ խրախուսանքի բնոյթ ունեն 28րդ, 32րդ, 80րդ, 94րդ, 95րդ, 96րդ, 97րդ, 102րդ, 103րդ, 113րդ սաղմոսները: Երգի ձեւի տակ յորդորանքի բնոյթ ունի 149րդ սաղմոսը: 104րդ, 111րդ, 118րդ, 124րդ, 132րդ սաղմոսները նկարագրում են ըստ առաքինութեան ապրուած կեանքը: 90րդ, 112րդ, 116րդ, 134րդ, 144րդ, 145րդ, 146րդ, 148րդ, 150րդ սաղմոսները գովքի օրհներգներ են, մինչ երախտագիտութեան յայտնման համար են 8րդ, 9րդ, 17րդ, 33րդ, 45րդ, 62րդ, 76րդ, 84րդ, 114րդ, 115րդ, 120րդ, 121րդ, 123րդ, 125րդ, 128րդ, 143րդ սաղմոսները: Առաջին սաղմոսը, 31րդը, 40րդը, 118րդը եւ 127րդը հռչակում են երանութիւնը: 107րդ սաղմոսը ցոյց է տալիս աղօթողի հոգատարութիւնն ու երգը, իսկ 80րդ սաղմոսը յորդորում է քաջութեան: Կան սաղմոսներ, որ յանդիմանում են ամբարիշտներին ու անօրէններին, ինչպէս օրինակի համար՝ 2րդ, 13րդ, 35րդ, 51րդ, 52րդ սաղմոսները: 4րդ սաղմոսը վերին օգնութիւնը կանչելու սաղմոսն է, աղաչանքի բնոյթ ունեն 19րդ եւ 63րդ սաղմոսները, ի Տէր ցնծութեան խօսքեր են պարունակում 22րդ, 26րդ, 38րդ, 39րդ, 41րդ, 61րդ, 75րդ, 83րդ, 96րդ, 98րդ, 151րդ¹ սաղմոսները: 57րդ եւ 81րդ սաղմոսները կամենում են հոգու խորքում արթնացնել ամօթն ու պարկեշտութիւնը: Ցնծութեան խօսքեր են արտասանում 47րդ եւ 64րդ սաղմոսները: 65րդ սաղմոսը բերկրանքի ու յարութեան սաղմոս է, իսկ 99րդ սաղմոսը միայն ցնծութեան խօսքեր ունի:

15. Քանի որ Սաղմոսները դասաւորուած են այսպէս, նրանցից իւրաքանչիւրի մէջ հնարաւոր է գտնել, ինչպէս արդէն ասացի, զգացումներն ու ներքին տրամադրութիւնները սեփական հոգու, օրինակներ եւ ուսուցումներ այդ զգացումներից իւրաքանչիւրի վերաբերեալ, ինչպէս նաեւ՝ թէ ինչպիսի խօսքերով կարելի է հաճոյ լինել Տիրոջը, ինչպիսի խօսքերով կարելի է ուղղել սեփական վարքն ու բարքերը,

¹ Աստուածաշնչի յունարէն եօթանասնից կոչուած թարգմանութիւնը Սաղմոսարանին աւելացնում է մի 151րդ սաղմոս, որի տիտղոսն է՝ «Դաւթի սաղմոս, երբ կռուի էր ելել Գողիաթի դէմ»:

երախտագիտութիւն յայտնել Աստծուն, որպէսզի այնպէս չպատահի՝ որ ուրիշ բաներ ասելով՝ հոգին ընկնի ամբարշտութեան գիրկը: Հաշիւ ենք տալու, յերաւի, ոչ միայն մեր բոլոր գործերի, այլ նաեւ իւրաքանչիւր դատարկ խօսքի համար (հմտ. Մտթ 12, 36): Եթէ, հետեւաբար, ինչ որ մէկին կամենում ես հռչակել երանելի, արդէն պատրաստ ունես խօսքերը՝ որոնցով պէտք է դա անես, եւ գիտես նաեւ պատճառները՝ որոնցից մղուած՝ կարող ես մէկին երանելի կոչել, եւ սաղմոսները՝ որ կարող են օգտակար լինել այդ նպատակի համար. առաջինը, 31րդը, 40րդը, 111րդը, 118րդը, 127րդը: Եթէ կամենում ես պախարակել հրեաների կողմից Փրկչի դէմ կազմակերպուած դաւադրութիւնները, ունես 2րդ սաղմոսը: Եթէ հալածուած ես իւրայիններիդ կողմից եւ շատեր քո դէմ են դուրս գալիս, աղօթիր 3րդ սաղմոսը: Եթէ վշտացած ես, աղերսիր Տիրոջը, իսկ երբ ուզես երախտագիտութիւն յայտնել Նրան, որովհետեւ ընդունեց աղաչանքդ, արտասանիր 4րդ, 74րդ, 114րդ սաղմոսները: Ապա տեսնելով, որ չարամիտ մարդիկ ցանկանում են որոգայթներ լարել ճանապարհիդ, կամենում ես՝ որ աղօթքդ ընդունելի լինի, արթնացիր արշալոյսին եւ երգիր 5րդ սաղմոսը: Եթէ լսելով Տիրոջ սպառնալիքները՝ խռովուել ես, աղօթիր 6րդ եւ 37րդ սաղմոսները: Եթէ ոմանք դաւաճանում են քեզ, ինչպէս Աքիտոփէլը Դաւթին, եւ ինչ որ մէկը գալիս է քեզ տեղեկացնելու, աղօթիր 7րդ սաղմոսը եւ վստահիր Աստծուն, որ կ'ազատի քեզ:

16. Ամէնուր տարածուած տեսնելով Տիրոջ շնորհը եւ մարդկութեան փրկութիւնը, եթէ կամենում ես ձայնդ մինչեւ երկինք բարձրացնել, արտասանիր 8րդ սաղմոսը: Եթէ ուզում ես «հնձանահարների» սաղմոսը երգել, երախտագիտութիւնդ յայտնելու համար Տիրոջը, նորից ունես 8րդ սաղմոսը եւ 83րդը: Թշնամու պարտութեան եւ Աստծոյ արարածի ազատագրման համար, առանց սեփական անձովդ հպարտանալու, այլ համոզուած՝ որ այդ ազատագրումը գործն է Աստծոյ Որդու, արտասանիր 9րդ սաղմոսը, որի մասին արդէն խօսեցի: Եթէ ինչ որ մէկը կամենում է ծանրօրէն չարչարել քեզ, վստահիր Տիրոջը եւ աղօթիր 19րդ սաղմոսը: Եթէ տեսնում ես ամբոխի հպարտութիւնը եւ չարիքի տարածումն այն աստիճան, որ այլեւս սուրբ ոչինչ չի մնացել մարդկանց սրտերում, ապաւինիր Տիրոջը եւ կարդա 11րդ սաղմոսը: Թշնամիները շարունակում են որոգայթներ լարել: Մի՛ յուսալքուիր, կարծես թէ Աստուած մոռացել է քեզ, այլ կանչիր Տիրոջը, երգելով 12րդ սաղմոսը: Եթէ լսում ես՝ թէ ինչպէս են ոմանք նախատում Նախախնամութիւնը, մի՛ մասնակցիր նրանց ամբարշտութեանը, այլ ընդհակառակն՝ աղօթիր Աստծուն, արտասանելով 13րդ եւ 52րդ սաղմոսները: Իսկ եթէ կը փափաքես իմանալ՝ թէ ովքեր են լինելու երկնքի արքայութեան քաղաքացիները, կարդա 14րդ սաղմոսը:

17. Զգո՞ւմ ես աղօթքի կարիքը, հակառակորդներիդ պատճառով՝ որ շրջապատում են հոգիդ. երգիր 16րդ, 85րդ, 87րդ, 140րդ սաղմոսները: Իսկ եթէ ուզում ես իմանալ՝ թէ ինչպէս էր աղօթում Մովսէսը, ունես 89րդ սաղմոսը: Փրկուեցի՞ր թշնամիներիցդ, ազատուելով բոլոր նրանցից՝ որ հալածում էին քեզ: Դու նոյնպէս երգիր 17րդ սաղմոսը: Ապշո՞ւմ ես արարչագործութեան գեղեցկութեան ներդաշնակութեանն ի տես, Նախախնամութեան շնորհի առջեւ՝ որ բացայայտում է արարածների մէջ, Օրէնքի սուրբ պատուիրանների առջեւ: Արտասանիր 18րդ եւ 23րդ սաղմոսները: Երբ հանդիպես վշտացածների, մխիթարիր նրանց՝ աղօթելով եւ նրանց ուղղելով 19րդ սաղմոսի խօսքերը: Անդրադառնո՞ւմ ես, որ Տէրն առաջնորդում է քեզ եւ ուղղում է քայլերդ: Ուրախացիր եւ ցնծութեամբ արտասանիր 22րդ սաղմոսը: Թշնամիները պաշարո՞ւմ են քեզ: Դու հոգիդ

առ Աստուած բարձրացրու, ասա 24րդ սաղմոսը եւ կը տեսնես մեղաւորների բնաջնջումը: Թշնամիները սպասո՞ւմ են քեզ, ուրիշ ոչինչ չունեն՝ եթէ ոչ միայն՝ արիւնոտ ձեռքեր, ցանկանում են բռնել քեզ եւ մահուան մատնել: Դատաստանը մի՛ վստահիր մարդկանց, քանի որ կասկածելի են մարդկային բոլոր դատաստանները. միմիայն Աստուածն նկատիր իբրեւ դատաւոր, որովհետեւ միմիայն Ինքն է արդար, եւ ասա 25րդ, 34րդ, 42րդ սաղմոսների խօսքերը: Եթէ թշնամիները շարունակում են յարձակումներն առաւել ուժգնութեամբ, զինեալ ոհմակաների նման, արհամարհելով քեզ՝ կարծես թէ տակաւին չես ստացել օծումը, եւ այս իսկ պատճառով ցանկանում են պատերազմել, մի՛ վախեցիր, այլ երգիր 26րդ սաղմոսը: Քանի որ դիւրաբեկ է մարդկային բնութիւնը, եթէ ոտքերիդ տակ թակարդներ զնողներն անպարկեշտ են, ուշադրութիւն մի՛ դարձրու նրանց, այլ աղաղակիր առ Աստուած, արտասանելով 27րդ սաղմոսի խօսքերը: Իսկ եթէ շնորհակալութիւնդ յայտնելու համար կամենում ես սովորել՝ թէ ինչպէս է հարկաւոր Տիրոջն ընծաներ մատուցել, հոգեւոր հասկացողութեամբ արտասանիր 28րդ սաղմոսը: Վերջում, երբ նորոգում ես հոգուդ շինութիւնը, որ Տիրոջ բնակարանն է, եւ մարմնի տունը, որում բնակում ես, երախտագիտութիւնդ յայտնիր եւ ասա 29րդ սաղմոսը եւ «վերամբարձ աստիճանների» կոչուող 126րդ սաղմոսը:

18. Երբ տեսնում ես, որ ատում են քեզ եւ ճշմարտութեան պատճառով հալածուած ես բոլոր ընկերներիդ ու ազգականներիդ կողմից, իրենց եւ քեզ նայելով մի՛ յուսահատուիր. եւ եթէ բոլոր ծանօթներդ խուսափում են քեզնից, մի՛ մռայլուիր, այլ առանձնացիր եւ աչքերդ ապագայ իրականութիւններին յառելով՝ արտասանիր 30րդ սաղմոսը: Ապա տեսնելով, որ մկրտուածները փրկուած են այս ապականուած սերունից, մարդկանց հանդէպ Աստուծոյ սիրոյ առաջ հիացած՝ նրանց համար երգիր 31րդ սաղմոսը: Երբ փափաքում ես սաղմոսել ուրիշների հետ, ի մի համախմբելով արդարներին եւ ուղղամիտներին, դու նոյնպէս ասա 32րդ սաղմոսը: Երբ թշնամիները ծառանում են առջեւդ, բայց դու խոհեմութեամբ կարողանում ես փախչել եւ ազատուել նրանց նեղութիւններից, եթէ կամենում ես երախտագիտութիւնդ յայտնել, համախմբիր հեզերին եւ նրանց հետ երգիր 33րդ սաղմոսը: Երբ տեսնում ես՝ թէ ինչպէս են ամբարիշտները մրցում չարագործութիւնների մէջ, մի՛ խորհիր՝ թէ չարութիւնը նրանց մէջ բնական մի բան է, ինչպէս հաստատում են հերետիկոսները. դու արտասանիր 35րդ սաղմոսը եւ կը տեսնես, որ պատասխանատու են իրենց մեղքի համար: Եթէ տեսնում ես, որ անօրէնները բազում չարիքներ են գործում եւ յոխորտում են փոքրերի դէմ, իսկ դու կամենում ես քաջալերել ուրիշներին՝ ուշադրութիւն չդարձնելու եւ չնախանձելու նրանց, քանի որ շուտով անհետանալու են, ինքդ քո եւ ուրիշների համար կարդա 36րդ սաղմոսը:

19. Բայց դու եւս, եթէ որոշում ես յսկել անձիդ վրայ եւ տեսնում ես՝ որ թշնամին յարձակում է վրադ – իրօք, այդ պահերին են նրա յարձակումները սաստկանում – եթէ կամենում ես նախապէս ճակատամարտի տրամադրուել նրա դէմ, երգիր 38րդ սաղմոսը: Իսկ երբ թշնամիները յարձակման են անցնում, եթէ կրում ես նեղութիւնները եւ ուզում ես սովորել՝ թէ քանիցս օգտակար է համբերութիւնը, արտասանիր 39րդ սաղմոսը: Եթէ տեսնում ես բազմաթիւ աղքատներ ու չքաւորներ եւ կամենում ես ողորմել նրանց, կարող ես գովել քեզնից առաջ նրանց հանդէպ ողորմութիւն ցուցաբերողներին եւ ուրիշ շատերի նոյնպէս մղել նոյն բարեգործութեանը՝ արտասանելով 40րդ սաղմոսը: Ապա, մինչ դու լի ես Աստուծոյ հանդէպ փափաքով, լսում ես՝ թէ ինչպէս են թշնամիները քեզ նախատում, մի՛ խռովուիր, այլ մտածիր՝ որ քեզնում ներկայ այդ փափաքի պտուղն անմահական է, մխիթարիր հոգիդ Աստուծոյ հանդէպ տածուած յոյսով, եւ սփոփելու ու դարմանելու համար այս կեանքի վիշտը՝ ասա 41րդ սաղմոսը: Երբ ուզում ես պահել անդադար յիշատակն այն

պարգեւները, որոնք Աստուած շնայլեց Հայրերին – եւքը Եգիպտոսից, պանդխտութիւնն անապատում, եւ թէ ինչպիսին էր Աստծոյ բարութիւնը եւ ինչպիսին՝ մարդկանց ապերախտութիւնը, եւ թէ ինչպէս Աստուած ցուցաբերեց Իր բարութիւնը, իսկ մարդիկ՝ իրենց ապերախտութիւնը – ունես 43րդ, 77րդ, 88րդ, 104րդ, 105րդ, 106րդ, 113րդ սաղմոսները: Իսկ յետոյ, Աստծոյ հովանու ներքոյ ապաստանած, վրադ ծանրացած նեղութիւններից ազատուած, կամենում ես շնորհակալութիւնդ յայտնել եւ Նրա քո Հանդէպ ցուցաբերած բարութիւնը պատմել, ունես 45րդ սաղմոսը:

20. Մեղանչեցիր, ընդունում ես ամօթով լի եւ հայցում ես ողորմութիւն. տրամադրութեանդ ներքոյ ունես 50րդ սաղմոսի խոստովանութեան ու ապաշխարութեան խօսքերը: Եթէ զրպարտում ես ինչ որ մի չարագործ թագաւորի կողմից եւ տեսնում ես՝ թէ ինչպէս է ցնծում սատանան, առանձնացիր եւ դու նոյնպէս ասա 51րդ սաղմոսի խօսքերը: Իսկ երբ հալածում ես եւ քեզ դաւաճանել ցանկացողները չարախօսում են քո մասին՝ ինչպէս զիփացիներն ու փղշտացիները վարուեցին Դաւթի հետ, քաջութիւնդ մի՛ կորցրու, վստահիր Տիրոջը, փառաւորիք Նրան եւ ասա 53րդ եւ 55րդ սաղմոսները: Իսկ եթէ հալածողներդ հետապնդում են քեզ եւ յանկարծակի մտնում են այն քարայրը՝ ուր թաքնուել էիր, այդ դէպքում նոյնպէս մի՛ սարսափիր. այդպիսի նեղութիւններում եւս ունես մխիթարութեանդ համար օգտակար խօսքեր 56րդ եւ 141րդ սաղմոսների տիտղոսներում: Եթէ քո դէմ դաւեր նիւթողը հրամայում է ոստիկաններին հսկել տունդ, բայց դու կարողանում ես փախչել, Տիրոջը վերագրիր այս շնորհը եւ արձանագրիր հոգուդ մէջ՝ ինչպէս քարի վրայ, որպէս անվնաս ազատուելուդ յիշատակ, եւ ասա 58րդ սաղմոսի խօսքերը: Ապա, եթէ քեզ հալածող թշնամիներդ նախատում են քեզ եւ ովքեր բարեկամներդ էին թւում՝ սուտ պատմութիւններ են պատմում եւ զրպարտում են քեզ, եթէ պայքարիդ մէջ մի քիչ տրտմութիւն ես զգում, կարող ես այնուամենայնիւ մխիթարուել՝ դու նոյնպէս փառաբանելով Աստծուն եւ արտասանելով 54րդ սաղմոսի խօսքերը: Իսկ ընդդէմ կեղծաւորների եւ նրանց՝ ովքեր ներկայութեանդ շողոքորթում են քեզ, նրանց խռովման համար ասա 57րդ սաղմոսը: Նրանց՝ ովքեր կատաղած յարձակում են վրադ եւ ցանկանում են խլել հոգիդ, դիմադրիր Աստծոյ Հանդէպ հպատակութեամբ եւ վստահութիւնդ մի՛ թող՝ որ նուազի: Որքան աւելի են կատաղում, դու այնքան աւելի հպատակուիր Տիրոջը եւ ասա 61րդ սաղմոսի խօսքերը: Իսկ եթէ հալածանքների պատճառով քաշուում ես անապատ, մի՛ վախեցիր՝ կարծես թէ միայնակ լինէիր: Աստուած քո հետ այնտեղ է եւ Նրա առջեւ, արշալոյսին, երգիր 62րդ սաղմոսը: Եթէ թշնամիները սարսափեցնում են քեզ, որոգայթներ լարելուց չեն դադարում եւ ամէն տեսակ չարիք հնարում են քո դէմ, ետ մի՛ քաշուիր. կաթնակեր մանուկների նետեր են նրանց պատճառած վէրքերը (Սղմ 63, 8), եթէ երգես 63րդ, 64րդ, 69րդ, 70րդ սաղմոսները:

21. Իսկ երբ կամենում ես օրհնաբանել Տիրոջը, երգիր 64րդ սաղմոսը: Եթէ կամենում ես ոմանց կրթել յարութեան վերաբերեալ, երգիր 65րդ սաղմոսը: Իսկ եթէ հայցում ես Աստծուց ողորմութիւն, օրհնիր Նրան՝ երգելով 66րդ սաղմոսը: Եթէ տեսնում ես՝ թէ ինչպէս են ամբարիշտները հարստանում առանց յոգնատանջ աշխատանքների եւ ապրում հանգիստ ու հանդարտ, մինչ արդարները կրում են նեղութիւններ, որպէսզի չգայթակղուես, ո՛չ էլ սասանուես, դու նոյնպէս ասա 72րդ սաղմոսը: Երբ Աստուած զայրացած է ժողովրդի դէմ, բարեխօսելու համար տրամադրութեանդ ներքոյ ունես 73րդ սաղմոսի իմաստուն խօսքերը: Երբ պէտք է դաւանես հաւատքդ, երգիր 9րդ, 74րդ, 91րդ, 104րդ, 105րդ, 106րդ, 107րդ, 110րդ, 117րդ, 125րդ, 137րդ սաղմոսները: Իսկ եթէ ուզում ես շփոթութեան մատնել յոյների ու հերետիկոսների իմաստութիւնը եւ ցոյց տալ՝ որ ոչ թէ իրենց մօտ, այլ կաթողիկէ Եկեղեցում է միայն գտնուում Աստծոյ ճանաչողութիւնը,

կարող ես երգել եւ ասել 75րդ սաղմոսը: Եթէ թշնամիները արգելափակել են ելքի բոլոր ճանապարհները եւ չափից աւելի տրտմած ես, նոյնիսկ եթէ խռովուած ես, մի՛ յուսահատուիր, այլ աղօթիր: Եթէ աղաչանքդ ընդունուի, երախտագիտութիւնդ յայտնիր Աստծուն, արտասանելով 76րդ սաղմոսը: Եթէ թշնամիները պնդում են, եթէ ներխուժում են Աստծոյ տան սեմից ներս եւ պղծում են այն, սպանում են սրբերին եւ նրանց դիակները որպէս կերակուր նետում են երկնքի թռչունների դիմաց, նրանց դաժանութիւնների ծանրութեան ներքոյ չվախենալու համար՝ տառապիր տառապողների հետ եւ աղօթիր Աստծուն, արտասանելով 78րդ սաղմոսը:

22. Տօնական օրերին, եթէ կամենում ես օրհներգներ առաքել առ Աստուած, կանչիր Տիրոջ ծառաներին եւ արտասանիր 80րդ եւ 94րդ սաղմոսները: Եթէ թշնամիներն ի մի են հաւաքւում ամէն կողմից, եթէ սպառնում են Աստծոյ տանը եւ դաշնակցում են ընդդէմ հաւատքի, նրանց բազմաքանակութեան եւ ուժի դիմաց քաջութիւնդ չկորցնելու համար՝ որպէս յոյսի խարխիս ունես 82րդ սաղմոսը: Իսկ եթէ տեսնելով Աստծոյ տունը եւ իր յաւիտենական օթեւանները, Առաքեալի նման փափաքում ես այն (Հմմտ. Փլպ 1, 23), դու նոյնպէս ասա 83րդ սաղմոսը: Երբ դադարում է բարկութիւնը, երբ ազատւում ես ստրկութիւնից, երախտագիտութիւնդ յայտնելու համար՝ ունես 84րդ եւ 125րդ սաղմոսները: Իսկ եթէ կամենում ես իմանալ տարբերութիւնը կաթողիկէ Եկեղեցու եւ հերետիկոսների միջեւ եւ շուարեցնել այս վերջիններին, կարող ես ասել այն՝ ինչ գրուած է 86րդ սաղմոսում: Եթէ կամենում ես ինքդ քեզ եւ ուրիշներին քաջալերել՝ հաւատք ունենալու Աստծոյ հանդէպ, եթէ կամենում ես ցոյց տալ՝ որ Աստծոյ հանդէպ տածուած յոյսը ամօթով չի թողնում, այլ անվախ է դարձնում հոգին, գովաբանիր Աստծուն՝ ասելով 90րդ սաղմոսի խօսքերը:

23. Կամենում ես սաղմոսել շաբաթ օրը. ունես 91րդ սաղմոսը: Կամենում ես երախտագիտութիւնդ յայտնել կիրակի օրը. ունես 23րդ սաղմոսը: Ուզում ես երգել շաբաթուայ երկրորդ օրը. ասա 47րդ սաղմոսի խօսքերը: Կամենում ես փառաբանել ուրբաթ օրը. օրհներգ ունես 92րդ սաղմոսում: Խաչից յետոյ կառուցուեց Աստծոյ տունը, թէեւ թշնամիները փորձում էին խոչընդոտել. այս իսկ պատճառով, Աստծոյ առջեւ լաւ է երգել յաղթանակի երգը, այսինքն՝ խօսքերը 92րդ սաղմոսի: Եթէ գերեվարութեան ընթացքում տունը կործանուել է եւ ապա կրկին կառուցուել, երգիր 95րդ սաղմոսի խօսքերը: Եթէ երկիրը խաղաղութեան մէջ է թշնամիներից եւ վերջապէս տիրում է անդորրը, եթէ թագաւորում է Տէրը, եւ կամենում ես երգել այս բարի իրողութիւնը, ունես 96րդ սաղմոսը: Ուզում ես սաղմոսել շաբաթուայ չորրորդ օրը. ունես 93րդ սաղմոսը: Այդ օրն, իրօք, Տէրը մատնուեց եւ լիակատար ազատութեամբ սկսեց վրէժխնդրութիւնն ու յաղթանակը մահուան հանդէպ: Եթէ Աւետարանն ընթերցելով գտնում ես, որ շաբաթուայ չորրորդ օրը հրեաները ժողով գումարեցին Տիրոջ դէմ, տեսնելով՝ թէ ինչպէս էր համարձակ գործում՝ պաշտպանելու համար մեզ սատանայի դէմ, արտասանիր նոյն 93րդ սաղմոսի խօսքերը: Եւ կրկին, եթէ ամէնուր տեսնում ես Տիրոջ Նախախնամութիւնն ու Տէրութիւնը եւ ոմանց կամենում ես կրթել Նրա հանդէպ հաւատքի ու հնազանդութեան մէջ, նախեւառաջ համոզելով նրանց դաւանել իրենց հաւատքը, երգիր 99րդ սաղմոսը: Ծանաչելով Նրա իշխանութիւնը որպէս դատաւոր, այսինքն՝ որ Տէրը դատում է միացնելով ողորմութիւնն ու դատաստանը, եթէ կամենում ես մօտենալ Նրան, սրա համար ունես 100րդ սաղմոսի խօսքերը:

24. Եթէ մեր աղքատացած բնութեան տկարութեան պատճառով յուսահատուում ես կեանքի դժուարութիւնների դիմաց եւ ուզում ես մխիթարութիւն ընդունել, ունես 101րդ սաղմոսը: Եւ քանի որ բարի է շնորհակալութիւն յայտնել Աստուծոն ամէնուր, միշտ եւ ամէն ինչի համար, երբ կամենում ես օրհնել Նրան՝ հոգիդ խրախուսելու համար, դու նոյնպէս ասա 102րդ եւ 103րդ սաղմոսները: Ուզում ես փառաբանել Աստուծոն, եւ իմանալ՝ թէ ինչպէս եւ ինչի համար պէտք է փառաբանել Նրան, եւ թէ ով է լաւ՝ որ ասի փառաբանութեան խօսքերը. ունես 104րդ, 106րդ, 134րդ, 145րդ, 146րդ, 147րդ, 148րդ, 150րդ սաղմոսները: Հաւատք ունես, ինչպէս ասում է Տէրը, եւ հաւատում ես աղօթելիս ասածներդ (հմմտ. Մտթ 21, 22). ասա 115րդ սաղմոսը: Զգում ես, որ գործերովդ բարձրանում ես վեր, այնպէս՝ որ կարող ես ասել. «Անցած իրողութիւնները մոռացած, ընթանում եմ դէպի այն՝ որ իմ առջեւում է» (Փլպ 13, 13). յառաջադիմութեանդ իւրաքանչիւր քայլի համար ունես "վերամբարձ աստիճանների" տասնհինգ սաղմոսները:

25. Ստրկացած ես զգում քեզ թշնամի մտածումների կողմից, նկատում ես՝ որ քաշում են քեզ իրենց ետեւից եւ զղջում ես. դադարի՛ր, դու նոյնպէս արտասուել՛ր, ինչպէս մի ժամանակ վարում էր ժողովուրդը, եւ արտասանիր խօսքերը 136րդ սաղմոսի: Փորձութիւնները որպէս հրահանգման առիթներ նկատելով, եթէ փորձութիւնից դուրս եկած՝ ուզում ես շնորհակալութիւն յայտնել, ունես 138րդ սաղմոսը: Կրկին շրջապատում են քեզ թշնամիները եւ կամենում ես ազատուել նրանցից. երգիր 5րդ եւ 142րդ սաղմոսները: Մի բռնի թշնամի է յայտնուել ժողովրդի ու քո լեզու, ինչպէս Գողիաթը Դաւթի դէմ. մի՛ վախեցիր, այլ դու նոյնպէս հաւատք ունեցիր Դաւթի նման եւ ասա 143րդ սաղմոսի խօսքերը: Ապա, հիանալով ի տես այն բարի գործերի՝ որոնք Աստուած կատարում է իւրաքանչիւր մարդու համար, յիշելով Նրա բարութիւնը քո եւ բոլորի հանդէպ, եթէ կամենում ես սրա համար օրհնել Աստուծոն, ասա Դաւթի խօսքերը, այն խօսքերը՝ որոնք ինքը նոյնպէս արտասանեց 144րդ սաղմոսում: Ուզում ես երգել Տիրոջը. ունես 92րդ եւ 97րդ սաղմոսները: Եթէ փոքր լինելով հանդերձ, ընտրում ես՝ գլխաւոր լինելու եղբայրներիդ մէջ, մի՛ հպարտացիր, այլ փառաւորելով Տիրոջը, որ ընտրեց քեզ, դու նոյնպէս արտասանիր Դաւթի 151րդ սաղմոսը: Ուզում ես երգել մի սաղմոս, որում հնչի Ալելուիան. ունես 104րդ, 105րդ, 106րդ, 111րդ, 112րդ, 113րդ, 114րդ, 115րդ, 116րդ, 117րդ, 118րդ, 134րդ, 135րդ, 145րդ, 146րդ, 147րդ, 148րդ, 149րդ, 150րդ սաղմոսները:

26. Երբ փափաքում ես երգել այն՝ ինչը որ յատուկ կերպով վերաբերում է Փրկչին, գրեթէ բոլոր սաղմոսներում կարող ես գտնել ինչ որ մի բան: Յատկապէս ունես 44րդ եւ 109րդ սաղմոսները, որոնք ցոյց են տալիս ճշմարիտ ծնունդը Հօրից եւ մարմնով գալուստը: Ունես 21րդը եւ 68րդը, որոնք մարգարէանում են աստուածային խաչի մասին, այն դաւադրութիւնների մասին՝ որոնց համբերեց Տէրը մեր սիրոյ համար, այն չարչարանքների մասին՝ որոնք կրեց: Ունես նաեւ 2րդ եւ 108րդ սաղմոսները, որոնք մատնանշում են հրեաների դաւադրութիւնն ու չարութիւնը եւ Յուդայ Իսկարիովտացու դաւաճանութիւնը: Ունես 20րդ, 49րդ եւ 71րդ սաղմոսները, որոնք ցոյց են տալիս Նրա թագաւորութիւնը, Նրա դատելու իշխանութիւնը, Նրա մարմնով գալուստը մեր մէջ եւ ժողովուրդների կոչումը: Ունես 15րդ սաղմոսը, որ ցոյց է տալիս յարութիւնը մեռելներից: Ունես 23րդը եւ 46րդը, որոնք աւետում են համբարձումը երկինք: Երբ կարդում ես 92րդ, 95րդ, 97րդ եւ 98րդ սաղմոսները, կարող ես տեսնել այն պարզեւները՝ որոնք Փրկիչը շնորհեց մեզ Իր չարչարանքներով:

27. Սրանք են Սաղմոսարանին մաս կազմող սաղմոսների բնորոշ յատկութիւնները, որ գրուել են մարդկանց օգուտի համար. այն պարունակում է որոշ սաղմոսներ, որոնք վերաբերում են հոգու իղձերի սրբազրմանը, եւ ուրիշներ, ինչպէս արդէն ասում էի, որոնցում շարադրուած են յստակ մարգարէութիւններ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի մարմնով գալստեան մասին: Տակաւին անհրաժեշտ է գանց չառնել պատճառը՝ որի համար այդ խօսքերը երգուած են եղանակներով ու երգով: Որոշ պարզ անձինք, թէեւ հաւատում են՝ որ խօսքերը ներշնչուած են Աստուծոց, այնուամենայնիւ կարծում են՝ թէ սաղմոսները երգուած են հնչիւնների հոգեպարար քաղցրութեան համար: Այսպէս չէ: Աստուածաշունչը չի փնտռել հաճելի կամ հմայիչ ոչինչ, այլ սա նոյնպէս հաստատուել է հոգու օգտակարութեան համար ամէն ինչում եւ յատկապէս այս երկու պատճառով. նախեւառաջ, որովհետեւ լաւ էր՝ որ աստուածային Գրութիւնները փառաւորէին Աստուծոն ոչ միայն արտասանութեամբ, այլ նաեւ ձայնասփիւռ երգով: Օրինակի համար, շարունակական կերպով արտասանուած են Օրէնքի ու մարգարէների գրքերը, պատմական բոլոր գրքերը եւ Նոր Կտակարանը. մինչդեռ ազատօրէն են ասում սաղմոսները, տաղերը, երգերը: Այսպիսով պահպանուած է մարդկանց տրուած պատուիրանը՝ սիրելու Աստուծոն բոլոր ուժերով, ամբողջ կարողութեամբ: Երկրորդ, ապա, լաւ կանոնաւորուած սրինգը արտադրում է կատարեալ հնչիւն. այսպէս, հոգու մէջ նոյնպէս կան գանազան կարողութիւններ. կայ միտքը, ցանկութիւնը, զայրոյթը, եւ մարմնի անդամների գործունէութիւնը սկիզբ է առնում նրանց շարժումից: Աստուածաշունչն ուզում է, որ մարդը անհամաձայնութեան կամ հակասութեան մէջ չլինի ինքն իր հետ, այնպէս՝ որ, օրինակի համար, մտածի լաւագոյն իրողութիւնների շուրջ եւ ապա գործի չարը, ինչպէս Պիղատոսը, որ նախ ասում է. «Ոչ մի յանցանք չեմ տեսնում նրանում» (Յվհ 18, 38), բայց յետոյ կատարում է հրեաների որոշումը: Կամ էլ, ցանկանայ չարը՝ չկարենալով սակայն կատարել այն մինչեւ խորքը, ինչպէս Սուսանի ծերունիները (Հմմտ. Դան 13): Կամ դարձեալ, խուսափել պոռնկութիւնից՝ բայց գողանալ, կամ չգողանալ՝ բայց սպանել, կամ չսպանել՝ բայց հայհոյել:

28. Ներաշխարհի այսօրինակ խանգարումներից խուսափելու համար, Աստուածաշունչը պահանջում է՝ որ հոգին ունենայ Քրիստոսի մտածումները, ինչպէս ասում է Առաքեալը (1Կր 2, 16; Հմմտ. Փլպ 2, 5), Քրիստոսի այդ մտածումներն ունենայ որպէս առաջնորդ, սանձահարի կրքերը, ղեկավարի մարմնի անդամները՝ հնազանդուելու համար Աստուածաշնչին: Կտնտոցն¹ է, որ արտադրում է ներդաշնակութիւնը. նմանապէս մարդը, սաղմոսարանի նման դարձած, հնազանդ՝ Հոգու հպումներին, իր բոլոր անդամներով եւ իր բոլոր շարժումներով ենթարկուած է՝ ծառայելու Աստուծոյ կամքին: Սաղմոսների եղանակաւոր ընթերցումը սրբապատկերն ու տիպարն է մտածումների այդօրինակ հանդարտութեան եւ ներաշխարհի այդօրինակ անդորրի: Ինչպէս որ հոգու մտածումները ճանաչում եւ բացայայտում ենք մեր խօսքերով, այսպէս էլ Տէրը, կամենալով՝ որ խօսքերի եղանակը լինէր խորհրդանշանը հոգու ներանձնական ներդաշնակութեան, հաստատեց՝ որ տաղերին ընկերանար նաեւ մեղեդին եւ որ սաղմոսները երգուէին: Սա փափաքն է հոգու, լինել լաւ տրամադրուած, ինչպէս գրուած է. «Ձեզնից որեւէ մէկը ուրախութեան մէջ է: Թող երգի սաղմոսները» (Յկր 5, 13): Այսպիսով հանդարտում է այն՝ ինչը որ նրանում ալեկոծ է, կարծր ու անկանոն: Տխրութիւնը դարմանուած է, երբ երգում ենք. «Ինչո՞ւ ես տրտում, հոգի իմ, ինչո՞ւ ես խռով» (Սղմ 41, 6): Հոգին ճանաչում է իր անկումը եւ ասում է. «Եւս մի քիչ եւ սասանուելու էին ոտքերս» (Սղմ 72, 2): Երկիւղը զօրանում է յոյսով, երբ ասում է. «Տէրն է իմ օգնականը, չեմ վախենում. ի՞նչ կարող է անել ինձ մարդը» (Սղմ 117, 6):

¹ Լարային նուագարանի թելերը թրթռացնող փոքրիկ հարիչ:

29. Ովքեր այսպէս չեն ընթերցում աստուածային երգերը, Սաղմոսները չեն երգում իմաստութեամբ (Սղմ 15, 9): Ովքեր, մինչդեռ, երգում են Սաղմոսները հոգեւոր նշուած տրամադրութեամբ, այսինքն՝ խօսքերի մեղեդին համաձայնեցնելով մտքին եւ հոգու հետ ներդաշնակութեամբ, այսպիսիք չեն երգում միայն շրթունքներով, այլ նաեւ մտքով, եւ մեծապէս նպաստում են ոչ միայն իրենք իրենց, այլ նաեւ նրանց՝ ովքեր կամենում են ունկնդրել: Երանելի Դաւիթը Սաւուղի համար այս կերպ երգելով հաճոյ եղաւ Աստծուն եւ հեռացրեց Սաւուղից խռովքն ու մտազարուժիւնը, խաղաղեցնելով նրա հոգին: Այսպէս նաեւ քահանաները, Սաղմոսների երգի միջոցով հրաւիրում էին ժողովուրդների հոգիները խաղաղութեան ու համերաշխութեան նրանց հետ՝ ովքեր խմբեր են կազմում երկնքում: Երգով ընկերակցուած Սաղմոսների ընթերցանութիւնը երաժշտական հրահանգում չէ, այլ նշանն է հոգու մտածումների ներդաշնակութեան եւ խորհրդապատկերն է անդորրի ու խաղաղութեան մէջ հանգչող մտքի: Հնչեղ ծնծղաներով, քնարով եւ տասնալարեանով Աստծուն գովաբանելը նոյնպէս խորհրդանշանն էր, որ մատնանշում էր կանոնաւոր տրամադրութիւնը մարմնի անդամների, որոնք նման են լարերին, եւ հոգու մտածումների, որոնք նման են ծնծղաներին. ինչպէս նաեւ մատնանշում էր այն փաստը՝ որ ամէն բան կեանք ու շարժում է ստանում հոգու հրամանով, այնպէս՝ որ, ինչպէս գրուած է, մարդն ապրում է հոգու շնորհիւ եւ մահացնում է մարմնի գործերը (Հմմտ. Հռմ 8, 13): Ով երգում է այսպէս, համաչափութիւն է պարզեւում իր հոգուն եւ առաջնորդում է նրան, այսպէս ասած, բաղաձայնութիւնից դէպի ներդաշնակութիւն, եւ այսպիսով հաստատուն մնալով իր ըստ բնութեան¹ վիճակի մէջ, ոչ մէկից եւ ոչնչից չի վախենում, այլ ընդհակառակն՝ խաղաղութիւն է գտնում մտածումներում եւ այրում է գալիք բարիքների ամենավառ բաղձանքով: Խօսքերի մեղեդիների միջոցով լաւ տրամադրուելով, մոռանում է կրքերը եւ հրճուանքով է դիտում Քրիստոսի մտածումներին (Հմմտ. 1Կր 2, 16), մտորելով լաւագոյն բարիքների շուրջ:

30. Որդեակ իմ, հարկաւոր է, ուրեմն, որ այս գիրքն ընթերցող իւրաքանչիւր ոք Աստծոյ կողմից ներշնչուած եւ նրանում բովանդակուած ամէն բան կարգայ անկեղծ տրամադրութեամբ, եւ կարծես մի դրախտային պարտէզից՝ քաղի պտուղներն ըստ այն օգտակարութեան՝ որ տեսնում է նրանցում: Համոզուած եմ, իրօք, որ այս գրքի խօսքերը պարունակում եւ դատում են մարդու ամբողջ կեանքը, հոգու զգացումները, մտածումները. մարդկանց մէջ աւելի ոչինչ չկայ: Եթէ որեւէ մէկը կարիքն ունի գղջման ու խոստովանանքի, եթէ գտնուում է նեղութիւնների կամ փորձութիւնների մէջ, եթէ հալածւում է կամ ազատւում դաւադրութիւններից, եթէ տրտում է կամ խռովուած կամ վերոյիշեալ վշտերից որեւէ մէկին մատնուած, եւ կամ տեսնում է թէ յառաջադիմում է եւ յաղթում թշնամուն, եթէ ուզում է գովաբանել, երախտագիտութիւն յայտնել, օրհնել Տիրոջը, այս բոլորը նրան ուսուցանւում է այս աստուածային Սաղմոսներում: Հարկ է ընտրել իւրաքանչիւր իրավիճակին յարմար սաղմոսները եւ ասել դրանք՝ կարծես գրուած լինէին մեր համար, աղօթելով Տիրոջը՝ մեր սեփական զգացումները համաձայնեցնելով գրութեան հետ:

31. Եւ թող որ Սաղմոսներին չխառնուեն մարդկային հրապուրիչ խօսքեր, ո՛չ էլ որեւէ մէկը տեղի տայ Սաղմոսների խօսքերը ինչ որ մի կերպ փոփոխելու փորձութեանը, այլ թող որ ամենայն պարզութեամբ ընթերցուի ու արտասանուի այն՝ ինչ գրուած է, այնպէս՝ ինչպէս գրուած է, որպէսզի նաեւ այն մարդիկ՝ որ պարզեւեցին մեզ Սաղմոսները, ճանաչելով իրենց խօսքերը՝ աղօթեն մեր հետ, կամ աւելի ճիշտը՝ որպէսզի Հոգին նոյնպէս, որ խօսեց Սրբերի մէջ, տեսնելով թէ ինչպէս են հնչում իր կողմից ներշնչուած խօսքերը, օգնութեան հասնի մեզ: Որքան աւելի բարի է Սրբերի կեանքը միւսներից, այնքան աւելի նախընտրելի ու արդիւնաւէտ են նրանց խօսքերը՝ քան կը կարողանայինք յօրինել մենք: Նրանցով, յիրաւի, հաճոյ եղան Աստծուն, ինչպէս ասում է Առաքեալը. «Նուաճեցին

¹ Այսինքն՝ ըստ Աստծոյ պատկերի ու նմանութեան լինելը (Հմմտ. Ծնդ 1, 26):

թագաւորութիւններ, գործեցին ըստ արդարութեան, հասան խոստումներին, փակեցին առիւծների բերանները, հանգցրին կրակի զօրութիւնը, փրկուեցին սրի հարուածից, ուժ ստացան իրենց տկարութիւններից, կտրիճներ եղան պատերազմի դաշտում, ետ մղեցին օտարների յարձակումները: Որոշ կանայք յարութեան միջոցով վերստացան իրենց մեռելներին» (Եբր 11, 33-35):

32. Երբ մենք այժմ արտասանում ենք Սաղմոսները, հաւատում ենք՝ որ Աստուած իսկոյն կը լսի նրանց՝ ուղբեր կանչում են իրեն այդ խօսքերով: Եթէ սաղմոսում ենք՝ երբ տրամութեան մէջ ենք, նրանցում կը գտնենք մեծ մխիթարութիւն. եթէ աղօթում ենք փորձութիւնների կամ հալածանքների ընթացքում, նեղութիւններից դուրս կը գանք աւելի հաստատուն եւ Տէրը, որ պահպանեց դրանք ասողին, կը պահպանի նաեւ մեզ, Սաղմոսները փախուստի կը մատնեն սատանային եւ կը ցրեն նրա արբանեակներին: Եթէ մէկը մեղանչում է, այդ խօսքերն արտասանելով՝ կ'ամաչի եւ կը դադարի մեղանչելուց. իսկ եթէ չի մեղանչել, կը ճաշակի ուրախութիւնը, որովհետեւ ձգտում է գալիք բարիքներին: Սաղմոսների երգը նրան կը զօրացնի պայքարելիս, երբեք չի անջատուի ճշմարտութիւնից, այլ որպէս յանդիմանութիւն կը լինի խաբեբանների համար, որոնք ջանում են նետել իրեն կեղծիքի մէջ: Այս ամէնին երաշխաւորում է ոչ թէ մարդը, այլ աստուածային Գրութիւնն ինքը: Աստուած, յիւրաւի, հրամայեց Մովսէսին գրել մեծ երգը եւ այն սովորեցնել ժողովրդին (Հմմտ. 20ր 31, 19). նրան՝ ով կարգուել է ժողովրդի գլուխ, հրամայում է գրել Երկրորդումն Օրինաց գիրքը (Հմմտ. 20ր 17, 18), պահել ձեռքերում եւ տեւապէս խորհրդածել նրա խօսքերի շուրջ, որովհետեւ այս պատգամները բաւական են առաքինութեան յիշատակն արթնացնելու եւ օգնութիւն հասցնելու համար նրանց՝ ուղբեր անկեղծօրէն մտորում են սրանց մասին: Ինչպէս նաեւ, երբ նաւէի որդին ոտք դրեց խոստացուած երկիր, տեսնելով թշնամիների բանակները եւ թէ ինչպէս էին ամաղեկացիների թագաւորները համախմբում պատերազմելու, գէնքերի ու թրերի փոխարէն՝ բոլորի դիմաց կարգաց Երկրորդումն Օրինացը, յիշեցնելով Օրէնքի խօսքերը, եւ այս վերջիններով զինելով ժողովրդին՝ յաղթական ելաւ թշնամիների դէմ (Հմմտ. Յս 8, 34-35): Յոգիա թագաւորը նոյնպէս, Գիրքը բացայայտելուց եւ բոլորի ներկայութեանը կարգաւուց յետոյ, այլեւս երբեք չսարսափեց թշնամիներից (Հմմտ. 2Թգ 22, 3-23, 3): Եւ մինչ ժողովուրդը պատերազմի դաշտում էր, Օրէնքի տախտակները պարունակող տապանակը ընթանում էր զօրքի առջեւից եւ զինեալ բանակներից աւելի օգտակար էր, պայմանով՝ որ իրեն կրողների ու ժողովրդի մէջ չիշխէր մեղքն ու կեղծաւորութիւնը: Իրօք, հաւատքն ու անկեղծութիւնը անհրաժեշտ են, որպէսզի Օրէնքը պատասխանի աղօթքներին:

33. Ես, – ասում էր վանականը, – իմաստուն մարդկանցից լսել եմ՝ թէ մի ժամանակ Իսրայէլում բաւական էր ընթերցել Աստուածաշունչը՝ սատանաներին փախցնելու եւ մարդկանց ոտքերի տակ նրանց կողմից լարուած թակարդներն ի գուր դարձնելու համար: Այսպիսով, – ասում էր, – դատապարտութեան են արժանի նրանք՝ ուղբեր այս գրքերը լքելով եւ մարդկային համոզիչ խօսքեր յօրինելով՝ իրենք իրենց երգմանցուցիչ¹ են կոչում: Դեւերը ծաղրում են այսպիսիներին եւ սրանք ենթարկւում են սատանաների ծաղրանքին, ինչպէս պատահեց հրեաներին, Սկէվայի որդիներին (Հմմտ. Գործք 19, 14), որոնք նոյնպէս փորձել էին դիւահալածումներ կատարել: Դեւերն ուրախանում են, երբ լսում են այսպիսի բաներ, մինչ սարսափում են Սրբերի խօսքերից եւ չեն կարողանում դիմանալ նրանց: Աստուածաշունչում իրօք ասում է, որ դեւերը չկարողանալով դիմանալ Տիրոջը՝ աղաղակում էին. «Աղաչում ենք քեզ, ժամանակից առաջ մի՛ չարչարիր մեզ» (Ղկս 8, 28): Յիւրաւի, Տիրոջը լոկ տեսնելիս արդէն այրւում էին: Այսպէս, Պօղոսը նոյնպէս հրամայում էր պիղծ ոգիներին (Հմմտ. Գործք 16, 18), իսկ աշակերտները հպատակեցնում

¹ Այսինքն՝ դիւահալած:

էին սատանաներին (Հմմտ. Գործք 16, 18; Ղկս 10, 17): Տիրոջ ձեռքը հովանի եղաւ Եղիսէի վրայ եւ նա երեք թագաւորների համար մարգարէացաւ ջրերի վերաբերեալ, երբ պատուիրեց հնչեցնել սաղմոսարանը (Հմմտ. 2Թգ 3, 14-19): Այսպէս նաեւ այժմ, ով հոգատարութիւն ունի տառապողների նկատմամբ, թող սաղմոս ասի. օգնութիւն կը հասցնի տառապողին եւ կը բացայայտի իր հաստատուն ու անկեղծ հաւատքը, եւ Աստուած տեսնելով՝ լրակատար բժշկութիւն կը պարգեւի իրեն աղերսողներին: Սուրբ սաղմոսերգուն եւս գիտակից էր սրան եւ ասում էր 118րդ սաղմոսում. «Խորհրդածելու եմ դատաստաններիդ շուրջ, չեմ մոռանալու խօսքերդ» (Սղմ 118, 16). եւ կրկին. «Դատաստանների սաղմոսներ են պանդխտութեանս վայրում» (Սղմ 118, 54): Եւ այս խօսքերը նրա համար փրկութիւն հայթայթեցին: Իրօք, ասում է. «Եթէ խորհրդածութեանս առարկան Օրէնքդ չլինէր, կորստեան կը մատնուէի խոնարհութեանս մէջ» (Սղմ 118, 92): Այս իսկ պատճառով, Պօղոսը նոյնպէս վստահեցնում էր իր աշակերտին, ասելով. «Խորհրդածիր այս գրքի շուրջ, սրանով զբաղուէր, որպէսզի բացայայտ տեսնուի յառաջագիմութիւնդ» (1Տմ 4, 15): Դու նոյնպէս խորհրդածիր այս բաների շուրջ, իմաստութեամբ ընթերցիր Սաղմոսները եւ Հոգու կողմից առաջնորդուած՝ կը կարողանաս ըմբռնել իւրաքանչիւրի իմաստը: Դու նոյնպէս կը հետեւես այն սուրբ մարդկանց կեանքին, որոնք Աստծուց մղուած՝ ասացին այս բաները:

